

1939.9

10

DR

1939.9

891.99.092

U-20







ԱՐԵՊԱՑ ԵՒ ՆՔ ԵԱՄԿԵՐՑՆԵՐԸ

ՀԱՏ ՕՏԱՐ ԵՎ ԵՏԵՐԵՐԻ

---

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Մ Ա Տ Ե Ւ Լ Ո Ր Ա Ն

Հ Ա Յ .

Մ Ա Զ Թ Ո Յ Ե Ւ Ն Ր Ա Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր Ը

Հ Ա Յ Օ Տ Ա Ր Ա Վ Բ Ի Ւ Ն Ե Ր Ի



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Ի Ւ Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1925

10 NOV 2011

## ԵԶԳԻ ԱՅԻ ՊԵՏԵՆ ԴՐԱՆ

Ժ Ա Մ .

ՄԱՇԹՈՑ ԵՒ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ՀԱՅ ՕՏԱՐ ԱՊՐԻԼԻ ՏՐԵՐԻ

ԳՐԵՑ

ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՅ



ՎԻԵՆԱ

ՄԻՒԹ-ԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1925



899.5  
Lh 404.0  
OP2

# ՄԱՇԹՈՑ ԵՒ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

LUS OSAR ԱՂԲԻՒԹՆԵՐԻ

ԳՐԱՑ

ՊՐՈՖ. Ն. ԱԴՐԵՆ



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԾՆ ԲՀՈՅԼԻ

Գ Ր Ա Դ Ա Բ Ա Ն

ST. NERSES SHNORHALL  
LIBRARY

Վ Ի Ւ Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն  
ARMENIAN PRELACY /

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1925

- .01. 2013



4729-2011

## ՄԱՅԹՈՑ ԵՒ ՆՐԱ ԱՅԱԿԵՐՏՆԵՐԸ

ՀՍՏ ՕՏԱՐ ԱՂԲԻՏԻՇՆԵՐԻ

Հայ գրի եւ գրականութեան հիմնագիրների կեանքը ծանօթ չէ այն չափով, որքան արժանի էին նրանք յիշողութեան իրենց մեծ գործով։ Լրիւ չեն տեղեկութիւնները մանաւանդ այն նշանաւոր մարդու մասին, որ առաջինն է զգացել սեփական գիր ունենալու պահանջը եւ հիմը ձգել ազգային գպրութեան։

Զարմանալին այն չէ, որ յետինները՝ ժամանակի խրամատով անջատուած չգիտէին պքանչելի գիւտի եւ նրա մեծ վաստակաւորի պատմութիւնը։ Նոյն իսկ ժամանակակից Կորիւնը չի կարող պարծենալ առանձին գիտութեամբ։ Թէեւ Մաշթոցի ձեռնասոն աշակերտը եւ նրա կենսագիրը, նա գրերի մասին շատ բան չգիտէ, գոնէ շատ բան չի պատմում։ Նրան հետաքրքրում է կարծես ոչ այնքան գիւտը, որքան Մաշթոցի քարոզութիւնը եւ այն էլ Հայաստանի ծայրագաւառներում եւ Աղուանից, Վրաց աշխարհներում։ Այս հանգամանքը ընդունակ է իրաւամբ կասկածներ յարուցանելու։ Սակայն մեր նպատակը չէ Կորիւնի գործը քննել։

Յոյն եւ լատին հին յիշատակարաններում կան քանի մի ակնարկներ եւ տեղեկութիւններ, որոնք, որքան եւ դիպուածական եւ հատուկտոր, բայց եւ այնպէս անսպասելի լոյս են ցօղում Մաշթոցի եւ իւրայինների կեանքի մի կարեւոր շերտի վերայ: Գուցէ եւ նրանք թոյլ տան բարձրացնելու այն քօղը, որ թւում է թէ ձգած է Կորիւնի երկի մէջ ոչ միայն Մաշթոցի այլ եւ իր Կորիւնի որոշ գործունէութեան վերայ:

Յոյն եկեղեցու պարծանք Փոտ պատրիարքը, յայտնի է, քաղաքակիրթ աշխարհի առաջ մեծ երախտիք ունի շնորհիւ իր հոչակաւոր “Գրադարանի”, Նրա փառքին մասնակից ենք, ի դեպ է ասել, Հայերս, քանի որ Փոտի երակների մէջ վազում էր առատօրէն Հայի արիւն, որովհետեւ Արշաւիր պատրիկի քեռորդին էր: Ընթերցասէր պատրիարքը կազմել էր հին հեղինակների ճոխ ժողովածու, որի շնորհիւ նորա տունը կիրթ հասարակութեան կենդրոն էր: Նա սովորութիւն ունէր կարդացած գրքերի մասին հաշիւ գրել, նշանակելով նրանց բովանդակութիւնը երբեմն համառօտ, յաճախ մանրամասն: Այս կերպով կազմուել է նրա “Գրադարան”, աշխատութիւնը, որն ամփոփում է մօտ 300 հեղինակութիւն: Կան գործեր, որ կորել են, գոնէ մինչեւ այժմ չեն յայտնուել. Նրանց թիւը քիչ չէ եւ շատերի մասին գաղափար ունենք միմիայն լուսամիտ պատրիարքի աշխատութեան շնորհիւ:

Ահա այդ Գրադարանումն է, որ Փոտը

յիշում է թէսդոր Մոպսուեստացու կամ Մամուեստացու, ինչպէս մերոնք էին ասում, միգործը հետեւեալ խօսքերով, որ բերում ենք ամբողջապէս, բնագրի հետ տալով եւ բառացի թարգմանութիւնը :

Bib. Photii. 81 (P. G. 103, col. 281).

Θεοδώρου πρεσβυτέρου

περὶ τῆς ἐν Περσίδι μα-  
γικῆς ἐν λόγοις γ'.

Ανεγνώσθη βιβλιδάριου  
Θεοδώρου περὶ τῆς ἐν Περ-  
σίδι μαγικῆς καὶ τις ἡ τῆς  
εὐσεβείας διαφορὰ ἐν λό-  
γοις τρίσι.

*Προσφωνεῖ δὲ αὐτοὺς πρὸς  
Μαστούβιον ἐξ Ἀρμενίας  
δρομώμενον, χωρεπίσκοπον  
δὲ τυγχάνοντα.*

*Kai ἐν μὲν τῷ πρώτῳ  
λόγῳ προστίθεται τὸ μιαρὸν  
Περσῶν δόγμα, δὲ Ζαράδης  
εἰσηγήσατο, ἵτοι περὶ τοῦ  
Ζουρουάμ, οὐδὲ ἀρχηγὴν πάν-  
των εἰσάγει, οὐδὲ καὶ Τύχην  
καλεῖ καὶ δι τοι σπένδων, ἵνα  
τέκῃ, τὸν Ὀρμίσδαν, ἔκεινον  
καὶ τὸν Σατανᾶν·  
καὶ περὶ αὐτῶν αἴμομιξίας.*

*Kai ἀπίως τὸ δυσσεβὲς  
καὶ ὑπέραισχον δόγμα κα-  
τὰ ιέξιν ἐκθεῖς ἀνασκευάζει  
ἐν τῷ ποώτῳ λόγῳ.*

Բանագործ Երեցի

Յաղագս ոք ի Պարսս  
միզութեան, ի Ծառս երիս.

Կարդացել եմ Թէոդորի  
գիրքը յաղագս որ ի Պարսս  
մհզութեան եւ զինչ է բա-  
րեպաշտ հաւատոյ զանա-  
գանութիւն յերիս ճառու :

**Ուղղուած են նրանք առ  
Մաստուբիոս ծագումով  
Հայաստանից եւ ինքն քոր-  
եպիսկոպոս :**

Առաջին ճառում խօսում է պարսից պիղծ կրօնի մասին, որ աւանդել է Զարադը, այն է Զքուանի մասին, որին ամեն բանի սկզբնապատճառ է դնում եւ որին անուանում է Նաեւ բախտ։ Եւթէ ինչպէս զոհում էր, որ ծնի Որմղդին, բայց ծնում է նրան եւ սատանային։ ‘Կաեւ նրանց արենապղծութեան մասին։

Մի խոսքով ամբարիշտ  
եւ գարշելի կրօնը մէջ բե-  
րելով բառասրառ հերքում  
է առաջին ճառում:

*Ἐν δὲ τοῖς λοιποῖς δυσὶ<sup>1</sup>  
λόγοις τὰ περὶ τῆς εὐσεβοῦς  
διέρχεται πίστεως, ἀπὸ τῆς  
κοσμογονίας ἀρξάμενος, καὶ  
περὶ αὐτῆς τῆς χάριτος  
ὅμοιως καὶ ἐπιτροχάδην  
διελθών.*

Οὗτος ὁ Θεόδωρος ὁ  
Μουγουβατίας εἶναι δοκεῖ  
τὴν δὲ γὰρ Νεστορίου αἵρεσιν  
καὶ μάλιστα ἐν τῷ τρίτῳ  
λόγῳ κρατύρων προαναφω-  
νεῖ, ἀλλὰ καὶ τὴν τῶν ἀμαρ-  
τωλῶν ἀπονατάστασιν τερα-  
τεύεται.

իսկ մնացեալ երկու ճառերում մեկնում է բարեպաշտ հաւատի էռթիւնը, սկսելով աշխարհի արարչութիւնից, խօսելով նոյն կերպ, թէեւ անցողակի նաեւ շնորհի մասին:

Այս թւեպորը թւռում է  
որ Մապսաւեստացին է.  
որովհետեւ Կեստորի աղան-  
դի մասին մանաւանդ երրորդ  
ճառում հաստատապէս  
նախաքարոզ է լինում այլեւ  
մեղաւորների վերականդ-  
ման մասին է բանդագու-  
շում:

Այս տողերը խիստ թանգարժէք են հայ  
գրականութեան համար։ Կարեւոր է թէոդորի  
երկի ոչ միայն բովանդակութիւնն ինքն ըստ  
ինքնեան, այլ եւ նորա հասցեն։ Բովանդակու-  
թեանը կը գառնանք ուրիշ առթիւ մի այլ յօ-  
դուածում<sup>1</sup>։ Այժմ կանգ առնենք երկրորդ կէտի,  
գրութեան հասցեի վերայ։

Արդ յոյն պատրիարքը վկայում է, որ  
Թէոդորի գիրքը գրուած է եղել մի հայ քոր-  
եպիսկոպոսի համար եւ բարեբախտաբար չի մռ-  
ուացել նշանակել նրա անունը։ Արդեօք ով է  
այդ հայ եկեղեցականը, որի անունը հնչում է  
Mastoubios։ Յիշենք, որ Թէոդոր Մամուեստա-  
ցին մեռել է 428 թուին եւ եպիսկոպոս էր

1. Թնհական նշանաբներ Եզնիկի մասին. Մարիկսի  
աշխատառութեան առթիւ (պատրաստ է ապարդրութեան):

սկսուած 392 թ. մերձաւորապէս։ Հայ դպրութեան ծանօթ անձը բնաւ չի վարանիր Mastubiosին նոյնացնելու Մաշթոցի, Թէոդորի ժամանակակից հայ իրականութեան ամենացայտուն գեմքի հետ։ Հետեւապէս Մաստօնթաւուս ուղղելու է Մաստօնչաւուս կամ Մաստօնտչաւուս։ Անանուն յոյնի խածուկօւ տից Մեշակուական Արմենիաւ յօդուածում Մաշթոցի անունը հնչում է Մաստիւնչաւուս և Մաստիւնչաւուս (P. G. 132):

Յուշի ունենալով հայ գրականութեան հօր կրկնակի անունը, թերեւս ոմանք գայթակղուին կարդալու Մասրօնթաւուս, այսինքն Մեսրուս։ Սակայն, որքան հաւաստի է Մաշթոց անունը, նոյնքան երկրայելի է Մեսրուս, աւելի ճիշդ Մեսրուս։ Հին մատենագիրները, Կորիւն եւ Պազար, գիտեն միայն Մաշթոց անունը։ Մինչդեռ Խորենացին է առաջինը, որ Մաշթոցի տեղ գործ է ածում Մեսրուս։ Ի՞նչ հիմ ունէր մեր պատմահայրը, անյայտ է։ Մինչեւ ինդրի պարզելը գերադասելի է անպայման Մաշթոցը։

Նկատենք, որ թուղթ Պրոկոպեայ եպիսկոպոսի ունի Մաժդոց ընթերցումը, որը կարծես աւելի հին եւ ստոյգ ձեւն է եւ կարող է թեւլադրել բառի ստուգաբանական ծագումը։ Եթե ընդունենք, որ Մաժդոցի նախնական հնչիւնը Մազդոց է, ինչ որ անհաւանական չէ, իրաւամբ կարող ենք նոյնացնել իրանական մազդականուան հետ, հայերէն -ոց յայտնի մասնիկի յաւելումով<sup>1</sup>։

<sup>1</sup> Մաժդոցը հետագայում փոխում է Մաշդոցի։

Մաստութիոսի քորեպիսկոպոս կոչումը  
չպէտք է շփոթեցնէ մեզ։ Թէ Մաշթոցն իրօք  
ինչ աստիճան ունէր, յայտնի չէ. գուցէ իսկա-  
պէս քորեպիսկոպոս էր։ Այսպէս էին կոչում  
այն եպիսկոպոսները, որ օրինական աթոռ չու-  
նէին եւ աթոռակալ եպիսկոպոսի օգնական  
կամ փոխանորդ էին։ Բառի կազմը, ինչպէս  
եւ հասկանակը էπիսխոπոս տից շώրաց, թէ օ էն  
շώրգ էպիսխոπոս ան, իմաստը մնում է գրեթէ  
նոյնը եւ պատշաճաւոր Մաշթոցի շրջիկ գործու-  
նէութեան<sup>1</sup>, Կորիւնը չէ յիշում իր ուսուցչի  
աստիճանը։ Իսկ ակումբա տիտղոսը, ստացած  
կ. Պոլսում, ձխօպահուց, միայն նոր կասկածների  
առիթ կարող է տալ։

Եթէ ճիշդ է մեր նոյնացումը, առաջին  
անգամն է, որ երեւան է գալիս Հայ լուսաւո-  
րութեան հօր անունը ընդհանուր գրականու-  
թեան մէջ։

---

Ինչպէս Պրոկլի պատասխանում, Գիրք թղթոց. էջ 9.  
Աբրահամ կաթողիկոսի թուղթ առ. Կիրիոն, անդ. 180.  
Օձնեցու սակս ժողովոց, անդ. 220. Գագիկի թուղթ առ  
Ռումանոս կայսր, անդ. 296։

Սոյն անունը կրում է եւ Կերսէս կաթողիկոսի ժա-  
մանակից Հայ եպիսկոպոսներից մինը՝ Մաշդոց Խորխոսու-  
նեաց եպս. անդ. 70, 73 եւայլն։

Մաշդոց, դառնում է Մաշթոց, դ>թ, շ-ի ազդեցու-  
թեամբ։ Ոց մասնիկը ծանօթ է եւ այլուստ, ինչպէս  
Տիրոց, Բարոց։ Մաշթոցի ինամութիւնը Mazdaկի հետ  
աւելի քան հաւանական է Մաշդոց եւ Մաժդոց եւ  
Մազդոց ձեւերի յաջորդական ձայնափոխութեամբ։

<sup>1</sup> Յայտնի է Պաղար Փարապեցու գանգատը, որ Նրան  
“այլ եւ քորպիսկոպոս ոք շարար, թող թէ անկտեցուցա-  
նել յեպիսկոպոսութիւնն”։ Թուղթ Պաղարայ, էջ 587։

Հնչական յարակցութիւնը չէ միայն, որ  
մեզ պատրում է: Կան եւ պատմական լուրջ  
հիմքեր, որ գալիս են հաստատելու մեր ենթա-  
դրութիւնը:

Թէոդորի եւ Մաշթոցի ժամանակակից  
ամենախոշոր երեւոյթը ընդհանուր եկեղեցական  
կեանքում Եփեսոսի ժողովն է: Պամուեստի  
եպիսկոպոսը թէեւ թողել էր այս աշխարհը ժո-  
ղովից երեք տարի առաջ, բայց իր անուան կշի-  
ռով եւ մտաւոր ժառանգութեամբ կենդանի  
մասնակից էր գալոց վէճերին երկար ժամանակ:

Եփեսոսի ժողովի շուրջը ծագած յուզում-  
ները արձագանք գտան եւ Հայաստանում:  
Պայքարող կողմերը առանձին արժեքը էին տա-  
լիս Հայերի բռնելիք գիրքին եւ աշխատում էին  
գրաւել նրանց համակրութիւնը: Ընդհանուր  
իրարանցումի ժամանակ կար վայրկեան, երբ  
Հայերը կարծես թէ հանրական ուշադրութեան  
կենդրոնն էին: Ազգային յիշողութիւնը պահել  
է միայն խուլ շշունջն եղելութեանց, որոնց մա-  
սին որոշակի ճառում են օտար աղբիւրները:

Եփեսոսի ժողովը փակեց իր նիստերը  
431 թուին յունիսի 26 Նեստորի դատապար-  
տում վ եւ աքսորով: Զի կարելի ասել, սակայն,  
որ սուրբ Հայրերի հաւաքական որոշումը սան-  
ձահարեց կրքերը եւ նրանք վերադարձան իրենց  
տեղերը խաղաղութեան ձիթենիով: Տարիներ  
էին պէտք, մինչեւ որ բորբոքուած ուղեղները  
հովանային ընդհանուր խաղաղութեան տենչով:  
Կռուող ուղղութեանց պարագլուխները՝ Կիւրեղ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԻ ՇՆՈՐՀԱԿԻ

Գ Բ Ա Դ Բ Ա Ն

ST. NERSEZ SIMON HAGI

L I B R A R Y

Աղեքսանդրացին եւ Յովհաննէս Անտիռքացին  
և ծիգերից յետոյ համազուեցին հաշտութեան  
գալ փոխադարձ զիջումների գնով։ Հաշտու-  
թիւնը կայացաւ 433 թուին մարտ ամսին։  
Այս կարեւոր գէպքն իսկ չզսպեց յուզումները։  
Անհաշտ տարբերը շարունակեցին հակառակու-  
թիւնները, կազմելով երկու կողմերի ծայրայեղ  
թեւերը։ Նրանց ոգին էր կիւրեղեանների բա-  
նակում Մելիտինի եպիսկոպոս Ակակը եւ Եղե-  
սիայի եպիսկոպոս Ռաբուլը։ Անտիռքեանների  
խմբում յամառողներն էին Կիլիկիայի եպիսկո-  
պոսները, որոնք ժողով գումարեցին Անաւար-  
զում եւ բողոքեցին կայացած միութեան գէմ<sup>1</sup>։  
Ակակն եւ Ռաբուլը եւս, իրք հաւատարիմ կիւ-  
րեղականներ, վրդովուած էին, որ իրենց պետը  
զիջաննելով մատնել է ճշմարտութեան դատը<sup>2</sup>։

Նեստորի անկումով հալածելի են յայ-  
տարարւում ոչ միայն նրա անձը, այլեւ  
գրուածները։ Հակառակորդները սկսում են տա-  
րածել Դիոդոր Տարսոնացու եւ Թէոդոր Մա-  
մուեստացու գրութիւնները։ Արանք էին բանա-  
դրուած վարդապետութեան բուն հեղինակները։  
Նեստորի հետեւորդների համար սա միեւնոյն  
ժամանակ մի կողմնակի միջոց էր ցոյց տալու, որ  
անարդարութիւն էր գործուած իրենց ուսուցչի  
գէմ, քանի որ նա այլ բան չէ քարոզել, քան  
ինչ որ դաւանել են յիշեալ հայրերը։

<sup>1</sup> Mansi, V 891.

<sup>2</sup> Անդ V. 860 և 998 Ակակի նամակը Կիւրեղին կրկ-  
նակի լատին թարգմանութեամբ։

Երեւում է, որ Թէոդորը առանձին հռչակ էր վայելում հայերի մօտ. այս առթիւ է, որ թշնամանող կողմերը հարկաւոր են համարում դիմել հայերին։ Ակակ եւ Ռաբուլ զգուշացնում են, որ Թէոդորի գրուածները խորշելի են եւ աղանդաւոր, իսկ Կիլիկիայի եպիսկոպոսները յայտարարում են, որ Ռաբուլ անձնական ոխունի Թէոդորի գէմ։

Այս հակասական քայլերը դժուար կացութիւն են ստեղծում հայերի համար։ Հայ եպիսկոպոսները ժողով են գումարում եւ ճշմարտութիւնը պարզելու նպատակով որոշում են դիմել Կ. Պոլսի պատրիարքին։ Երկու երեց, Ղեւոնդիոս եւ Արերիոս յանձնարարական նամակով մեկնում են Պրոկլի մօտ։ Նրանք տանում են իրենց հետ նաեւ Թէոդորի գրուածներից քաղուածոյ կտորներ։ Հայերն ուզում են իմանալ պատրիարքի կարծիքը, թէ ով է արդար, Ակակն ու Ռաբուլը թէ Կիլիկեցիք։

Պրոկլ ընդունելով հայ դեսպանութիւնը, քննում է ուշադրութեամբ նրանց թղթերը եւ պատրաստում պատասխան։ Միեւնոյն ժամանակ հարկաւոր է նկատում դիմել Աղեքսանդրիայի եւ Անտիոքի պատրիարքներին եւ խնդրում որ նրանք եւս ստորագրեն հայերին զրկելիք պատասխանը։ Պրոկլի դիմումը յատուկ նամակով տանում է Անտիոք Թէոդոր անունով մի սարկաւագ։ Յովհաննես պատրիարքն իր եպիսկոպոսների հաւանութեամբ ստորագրում է թուղթը։ Մի այլ սարկաւագ Վասիլ անունով նոյն

յանձնարարականով ուղարկում է Աղեքսանդրիա եւ բերում է Կիւրեղի պատասխանը:

Մինչ այն պատրիարքն արդէն զրկած է լինում իր գաւանաբանական թուղթը Հայերին: Ինչպէս երեւում է, Պրոկլը բաւականանալով Անտիոքի վերաբերումով աճապարում է հասցնել թուղթը Հայերին, առանց սպասելու Կիւրեղի կարծիքին: Բայց, անտարակոյս, զգուշութեան համար ձեռնպահ է մնում որեւէ ակնարկ անել Թէոդորի հասցեին:

Այս անցուդարձին վերաբերեալ վաւերագիրները, դժբախտաբար, կորած են մեծ մասով: Մնացել են միմիայն Պրոկլի թուղթը Հայերին յոյն, Հայ եւ ասորի լեզուներով. մնացել են նաեւ Ակակի թղթերը Հայոց եւ նրանց պատասխանները միմիայն Հայերէն:

Լատին մատենագիր Լիբերատը, ինչպէս երեւում է, ունեցել է իր տրամադրութեան տակ կորած վաւերագիրներից շատերը եւ չի զլացել Հակիրճ բայց բովանդակալից Հաշիւ տալ իր երկի մէջ: Ճնորհապարտ պիտի լինենք Հեռաւոր կարթագէնի եկեղեցականին, որ անտես չի արել եւ Հայոց Հարցը: Սարկաւագ Լիբերատը յիշեալ եկեղեցու կողմից մասնակցել է իր ժամանակուայ շատ ժողովների եւ ներկայ է եղել նաեւ տիեզերական Ե. ժողովին 553 թ. Թէոդոր Մամուեստացու, ինչպէս եւ Թէոդորիտի եւ Իբասի Խնդիրը նոյն ժողովի քննութեան եւ ապա դատապարտութեան առարկայ եղաւ: Երեք անձերը, կամ ինչպէս ասւում է եկեղեցական

պատմութեան մէջ, երեք գլուխները, դատում  
էին առ Նեստոր ունեցած յարաբերութեան  
տեսակէտից: Բնականօրէն ժողովը աչքի պիտի  
անցնէր Նրանց վերաբերեալ գրութիւններն ու  
թղթերը Եփեսոսեան վէճերի ժամանակից: Յե-  
տագայում Նրանցից շատերը կորստեան են մատ-  
նուել եւ մանաւանդ այն թղթերը, որ նայում  
էին Հայերիս: Վիրերատը օդտուել է Նրանցից  
եւ տեղ տուել իր երկի մէջ, որ ամփոփում է  
եկեղեցական անցքերի պատմութիւնը 428—  
553թ. Վերեւ յիշեցինք, ինչ որ նա պատմում  
է Հայոց մասին: Պիտանի ենք Համարում մէջ  
բերել եւ Նրա բուն խօսքերը բնագրով եւ  
թարգմանութեամբ:

Liberati diaconi Breviarium, P. L. 68, col. 963.

Nestorii sectatores... aiebant non sapuisse nova Nestorium, sed antiquorum patrum prosecutum fuisse doctrinam et in eotantum studii gesserunt, ut ipsa eorum volumina malitiose in Syrorum linguam et in Armenorum atque Persarum transferrant.

Sed haec ubi agnoverunt Acacius Melitenensis et Rabula Edessae civitatis episcopus... scripserunt Armeniae episcopis, ne Theodori

Ները . . . ասում էին, որ Նեստոր նոր բան չէ քարոզել, այլ հին Հայերի վարդապետութեանն է հետեւել: Եւ այնքան եռանդ թափեցին, որ մինչեւ անգամ Նրանց իսկ գրուածները չարամտօրէն թարգմանեցին ասորի, Հայ եւ պարսիկ լեզուներով:

Բայց երբ առ իմացան Ակակ Մելետինացին եւ Եղեսիայի եպիսկոպոսը Ռաբուլը . . . գրեցին Հայոց եպիսկոպոսներին. որ չընդունեն Թէոդոր Ամամուստացու

Mopsuesteni libros susciperent tanquam haereticorum et auctoris dogmatis Nestoriani, insimul antiibus episcopis Ciliciae Rabulam et Acacium, quod hoc non ex charitate, sed ex emulatione atque contentione fecissent.

Congregati sunt ergo in unam venerabiles Armeniae episcopi et miserrunt duos presbyteros Leontium et Aberium ad Proclum Constantinopolitanum episcopum, secundum morem, cum libellis suis, et uno volumine Theodori Mopsuesteni, scire volentes utrum doctrina Thodori an Rabulae et Acacii vera esse probaretur.

Itaque Proclus accipiens Armeniae episcoporum libellos et illud Theodori volumen, diligentius utraque examinans, tomum Armeniis scripsit et destinavit, in quo posuit, ad interimendas Nestorianorum versutias, qui duas in Christo inducunt personas, "unum de trinitate incarnatum," quem et direxit Joanni

գրքերը, իրը հերձուածողին նեստորեան վարդապետութեան հեղինակի: Մինչդեռ Կիլիկիայի եպիսկոպոսները ամբաստանում էին Ռաբուլին և Ակակին, որ նրանք այդպէս են վարուելով սիրուց, այլ նախանձից եւ շարութիւնից դրդուած:

Արդ ժողով են զումարում հայոց պատուարժան եպիսկոպոսները եւ երկու երեցենու զարկում Պետքնադիոսեւ Արերիսու, Կոստանդինոպոլսի եպիսկոպոսի Պրոկլի մօտ, ըստ սովորութեան, իրենց թղթով եւ Թէոդոր Մամուեստացու գրուածով, կամենայով վերահասու լենել, արդեօք որն է ընդունելի իբր ճշմարիս, Թէոդորի թէ Ռաբուլի եւ Ակակի ուսմունքը:

Այսպէս Պրոկլը ստանալով հայ եպիսկոպոսների թուղթը եւ Թէոդորի գրուածը, ուշիուշով քննեց երկուսն էլ, եւ յետոյ նամակ գրեց հայերին, որի մէջ ի ջնջումն նեստորականների նենդութիւնների, որոնք "զերկուս ի քրիստոս մուծանին անձինսոց, դրօշմում է՝ "մինն յերոդութենէ մարմնացեալ," պրոկլը նամակին ուղար-

Antiocheno per Theodorum diaconum suum, continentem subter capitula ab haereticis prolata; expetens ab eo, pro communi fide servanda, ut cum suo concilio eum susciperet et subscriberet.

Joannes autem et qui cum eo erant congregati episcopi, legentes tomum et ejus laudantes compositionem, subscipserunt in eo et Proculo transmiserunt...

Sed Basilius quidam diaconus sumens tomum Procli quem Armeniis scripserat, Alexandriam venit et Armenorum libellos suis libellis annectens, obtulit Cyrillo ejusdem urbi antistiti...

Itaque Basilius diaconus Constantinopolim veniens libellos composuit et archiepiscopo Proculo porrexit, associans cuncta quae ante hac Cyriko archiepiscopo obtulerat.

կում է Յովհաննես Անտիռքացուն իր Թէոդոր<sup>1</sup> սարկաւագի ձեռքով. որը պարունակում էր նաև քաղուածներ հերետիկուներից, և խնդրում է նորանից, որ յանուն ընդհանուր հաւատի պահպանութեան նա իր Եկեղեցու հետ պաշտպան կանգնի և ստորագրի:

Յովհաննեսն իր ժողովական եպիսկոպոսների հետ միասին կարդալով Պրոկլի նամակը հաւանեցին Նրա շարագրուածը. ստորագրեցին եւ դարձրին Որոկլին:

Բայց այն վասիլ (Բարսեղ) սարկաւագ. վերցնելով Պրոկլի նամակը, որ զրուած էր հայոց. մեկնեց Աղեքսանդրիա և հայոց թուղթն իր զրութեան հետ ներկայացրեց Կիւրեղին, նոյն քաղաքի առաջնորդին:

Վասիլ սարկաւագը վերադառնալով կաստանդնուպոլիս, կաղմեց մի թուղթ և յանձնեց Որոկլ արքեպիսկոպոսին, կցելով նրան այն ամենը, ինչ որ դրանից յառաջ ստացել էր Կիւրեղից:

<sup>1</sup> Յովհաննես Անտիռքացին Պրոկլին դրած նամակում անուանում է սարկաւագին Թէոդորոս (diacono Theodosio) P. G. 65, col. 877:

Proclus vero iam destinaverat tomum suum Armeniis, in quo tomo nullam facit de Theodoro reprehensionis mentionem.

Quod cognoscens Basilius scripsit libellum in quo docuit libros Theodori vitandos, sicut Arii et Eunomii blasphemias...

Post haec autem occasione accepta surrexerunt quidam monachi ab Armenia Apollinaris sectatores duo vel tres (sicut refert Joannes Antiochenus in epistola sua) portantes excerpta capitula, ut dicebant, de libris Theodori Mopsuesteni, vel aliorum sanctorum patrum, qui in illo tempore, sicut diximus, contra Apollinarem scripserant: et intrantes regiam civitatem et multorum sor didantes auditum callidi tate sua omnia pertur babant.

Deinde circumdeuntes totius Orientis civitates et universa monasteria, damnanda esse cum auc-

Uaկոյն Պրոկլն արդէն զրկել էր իր թուղթը հայերին, որի մէջ թէռդորի վերաբերեալ ոչ մի յանդիմանական լիշտապ կութիւն չէր արած:

Այս բանը իմանալով Վասիլը մի թուղթ գրեց, որով յորդորում էր խորշել Թէրդորի գրքերից այնպէս, որպէս Արքոսի եւ Եւնոմի ամբարշտութիւնից . . . :

Այնուհետեւ առթից օգտականով ելան Հայաստանից քանի մի վանականներ. Ապոլինարի հետեւորդ, երկու թէ երեք հսկի (ինչպէս հազորդում է Յովհաննէս Անտիոքացին իր նամակում) եւ առնելով իրենց հետ քաղուածներ, ինչպէս իրենք էին հաւատացնում, թէոդոր Սամասեստացուց եւ կամ այլ ուրազան հայրերից. որոնք այս ժամանակ որպէս լիշեցինք, գրել էին Ապոլինարի դէմեւ մանելով թագաւորանիստ քաղաքը եւ շատերի ունկնդրութիւնը ապականելով իրենց նենգութեամբ խռովեցին առևն ինչ:

Ապա շրջելով ամբողջ Արեւելքի քաղաքները եւ բոլոր մենաստանները պահանջում էին, որ գատա-

teribus clamabant accu-  
santes ea Nestoriam sensu  
fuisse conscripta: „quia  
si Nestorius juste dam-  
natus est, damnentur et  
ista, dicebant, cum suis  
auctoribus".

պարտուէին այդ քաղուած-  
ները իրենց հեղինակների  
հետ միասին, յանդիմանե-  
լով, որ նրանք դրուած են  
Դեսուրական սգով "թէ  
Եկատորը արդարացի է զա-  
տապարտուին եւ սրանք,  
պնդում էին նրանք. իրենց  
հեղինակներով „:

**Հիմք չկայ բնաւ կասկածելու լատին սար-**  
**կաւագի ճշմարտախօսու թեանը ոչ մի կէտում, ոչ**  
**մի տողում։ Ազգային ազբիւրները, որքան եւ պա-**  
**կասաւոր, հաստատուն կոռուան են տալիս ստուգե-**  
**լու եւ լուսարանելու օտարի տեղեկութիւնները։**

**Մելիտինի եպ. Ակակն իր թղթում գրում**  
**է՝ "զահի հարեալ թէ գուցէ եւ ի ձեր եկե-**  
**ղեցիսդ արատ գտեալ ճարակեսցի, լաւ համա-**  
**րեցաք ազգել առ ձեզ զհասարակաց աւ գուտն**  
**խորհելով ։ Խօսքը նեստորականութեան մասին**  
**է։ Թղթի վերջում պարզում է Ակակն իր քայլի**  
**իսկական շարժառ/թը։**

"Քայլց մեզ երկիւղ է թէ՝ գուցէ ի թէու-  
գորեա Մամուեստեայ ոխմանէն աշակերտեալ ոք  
գտցի եւ ի շար ժանդէն Նեստորի ի միամիտ  
անձինս ազգիցէ։ Զի զնորա մնացեալ զրեանն  
իրեւ խնդիրս այս յայտնեցաւ եւ մանաւանդ  
որ վասն մարմնախառնին գրեալ էր, վճիռ հրա-  
մանի ետուն սուրբ աշխարհաժողով եպիսկո-  
պոսացն որ յԵփեսացւոց քաղաքին եղեւ ի մի  
վայր ժողովել զբնաւ գրեանն եւ այրել։ Ամդ

փոյթ լիցի ձեզ առանց պղտորութեան զհաւատսն պահել, զի կատարեալ զարդարութիւնն անապական ընկալջիք<sup>1</sup>:

Պրոկլ պատրիարքի հայոց համար գրած թղթի հայերէն օրինակը խրատական է: “Սացոյց է տալիս թէ ինչպէս էին այլայլում պատմական վաւերագիրները դաւանաբանական վէճերի տաքացած միջնոլորտում:

Պրոկլի նամակի յունարէն բնագիրը, որ տպուած է Mansi, Ph. Հատորում եւ արտատպուած Migne, P. G. 65, 856, հաշւում է Ա—ԺԵ զլուխ: Հայերէն թարգմանութիւնը, որ զետեղուած է “Գիրք թղթոց”, յիշատակարանում, տասնհեւհինգ զլուխներից պահել է միայն Թ—ԺԵ: Ասորի թարգմանութիւնը պահուել է Զաքարիա Հոետորի Եկեղեցական պատմութեան մէջ<sup>2</sup>: Սա եւս մեզ հետաքրքրող կէտերում զանազանում է յունարէնից, բայց չի մօտենում էապէս հային: Մեր նիւթը պահանջում է կանգ առնել մի վայրկեան այս կարեւոր թղթերի քննութեան վրայ:

Յոյն բնագիրը վերջին ժԵ գլխում ասում է. ταῦτα δὲ πρὸς τὴν ὑμετέραν ἐπεστείλαμεν ἀγάπην ἐκ τῶν ὑμετέρων προτραπανέντες λιθέλιων, ὃν πρὸς ἡμᾶς

<sup>1</sup> Գիրք թղթոց, էջ 14:

<sup>2</sup> Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor, ed. Ahrens u. G. Krüger, 1899, Teubnerի շարքում: Անգլիերէն թարգմ. The Syriac Chronicle of Zacharia of Mytilene, ed. Hamilton and Brooks, 1899.

διεπέμψασθε, φήσαντες ιυμεῶνάς τινας καὶ τερατολόγους ἀνθρώπους ἐαυτοὺς ἐπειφρῆσαι τῇ ὥμετέρᾳ χώρᾳ βουλομένους διὰ πονηρῶν γραμμάτων καὶ τῶν ἀντιστρέσσεων τῆς φενδώνυμου γνώσεως διαστρέψειν τὸ ἀπλοῦν καὶ ἀμαργάνευτον τῆς ὁρθοδοξίου πίστεως κύλλος.

Հայը թարգմանում է. «Եւ զայս ամենայն  
զի գրեցաք առ ձեր սեր այդր, զի լու եղեւ  
մեզ եթէ աբք ոմանք ժանդախաւսք, ցնորա-  
խաւսք անկան [ի] յաշխարհ այդր եւ կամին  
ժանդաժուտ<sup>1</sup> իմն գրովք, հակառակութեամբ  
ստաբան [իս]ստախորհուրդ գիտութեան<sup>2</sup> խոտո-  
րել զպարզամտութիւն, զանպաճոյք զանմեքե-  
նայ, զուղղափառ գեղն հաւատոյն<sup>3</sup>»:

Բնագրի ընդգծուած տողերը, որ նշանակում են. “գրում ենք գրդուած ձերդ թղթից, որ զոկել էիք մեզ”, թողնուած են հայ թարգմանութեան մեջ: Յունարէնից երեւում է, որ պատրիարքի գրութիւնը մի պատասխան է այն դիմումին, որ արել են հայերը: Մինչդեռ հայն այնպէս է ձեւացնում, իբր պատրիարքից է ծագում նախաձեռնութիւնը, որը լսելով — “Եռեղեւ մեզ, — հաւատին սպառնացող վտանգը, հարկ է տեսել զգուշացնել թղթով հայերին:

1. Յօրին. Ժանդաժող = πονηρός, զոր Վարդանեկան  
ու զլել է ժանդաժողութ, WZKM, 1913, էջ 422 և Համբ.  
Եմս. 1920:

2 Βορήν. ηθωνιθε κατέ, τι γηγεψε τηθωνιθε κατη = γνώσεως:

Յ Զուղղափառ օքտնձօչօր, թէ սկզբ է կարդալ  
հաւատոցի դեղն:

Ասորի թարգմանութիւնը եւս ձգած է միշեալ տողերը, բայց չի փոխարինել ուրիշ բանով։ Ասորին նայում է թղթի վերայ իրրեւմի կարեւոր գաւանաբանական գրութեան եւ հանել է այն տողերը, որպէս զի թղթին ընդհանուր բնաւորութիւն տայ եւ ոչ լոկ հայկական։ Երեւի, նոյն նպատակով է, որ մի կողմ է նետել եւ սկզբի ներածական խօսքերը.

I. Ո՞ս բετρίաշ, ձեւէկօի, օսնէշէն իշտան տին ՓՍշին և տն Լօշտումն տի տորմնաւ Լուպոյ և էտրածուն ո Փիմոյ տան նեարաւ տիշ ձունտիշ Հիշառաւ, առեր ննաշչուն տի նմունք ունուրշաւ էպէ ունուրշ չարգ ծ չունուս տիշ Փունք էշնրուս.

Հայերէնի մեջ եւս պակասում են այս խօսքերը, ինչպէս եւ հետեւեալ ութ գլուխները եւ նրանց փոխարէն գտնում ենք հայ ինքնասիրութիւնը շոյող յառաջարան։ Թուում է, որ եւ այս կետում օտար ձեռք է սահել որոկի թղթի վերայից։

Բարեբախտաբար Անիք հաւատոյ կարեւոր գործը, որ վերջերս լոյս տեսաւ Էջմիածին, լրացնում է թերի գլուխներից Գ—Թ. եւ պարզում է յառաջարանի ծագումը։ Աակայն պիտի խոստովանենք, մեր կասկածները դեռ չեն փարաւում ովզովին։

Նոր ստանալով շնորհակալութեամբ Մեսրոս արքեպիսկոպոսից Անիք հաւատոյ եւ ծանօթանալով Հ. Վարդանեանի յօդուածին, Հ. Տ. 1921 թ. շնորհիւ Հ. Համազասպ Ռոկեանին, չենք կարող անպայման յարիլ այն կարծիքին, որ

պաշտպանում է կարապետ եպիսկոպոսը իր ներածութեան մէջ եւ որին համամիտ է Հ. Վարդանեանը:

Վերջինս ընդունում է, որ Եղնիկի առ սուրբ Սահակ հայոց հայրապետ եւ առ սուրբ Մաժդոց մեղայականը, թղթիրի անկումով կամ ետեւառաջութեամբ խառնուել են Պրոկլի թղթին եւ կազմել մէկ ամբողջութիւն ու Եղնիկ անունն էլ տեղի է տուած Պրոկլի: Միանգամայն հնարաւոր է:

Սակայն խնդիրն այն է, որ Եղնիկի թուղթը գրուած է միմիայն Մաշթոցին, ինչպէս վկայում է Անիքը («զոր գրեաց ի Կ. Պոլիս առ երանելին Մաշտոց», էջ 130) եւ հաստատում է թղթի ոճը, ուր խօսում է եղակի դէմքով («աղաւթից քոց [իմա աղաւթիւք քոյ] տեառն սրբութեան, ընթերցումը գերադասելի է քան «աղաւթիւք ծեր, Կնիք, 130»): Հետեւապէս, քանի որ Պրոկլի խառնակուած թուղթը սկսում է Եղնիկի յառաջարանով, պէտք էր սպասել, որ վերնագիրը եւս լինէր Եղնիկ առ Մաշտոց:

Միւս կողմից Եղնիկը թուղթը հասարակ մեղայական չէ եղել: Անիք ի մէջ նորա անունով մի դաւանաբանական հատուած կայ (էջ 51), որ հաւանօրէն առնուած է նոյն առ Մաշտոց թղթից: Երեւում է, որ նրա թուղթը անդրանիկ հաշիւ է այն խնդիրների, որոց համար հայերը սպասում էին Պրոկլի գրութեան: Գուցէ եւ Եղնիկն է վերջնիս բերողը եւ թարգմանիչը (ուրիշ տեղ նկատել ենք թղթի «աչք բժարեր, նախադա-

սութեաննմանութիւնը ընդդէմ աղանդոցի սկզբի  
“զաղտն եւ զբիժն” եւ “այլ”):

Եզնիկի եւ Պրոկլի թղթերը սերտօրէն կա-  
պուած են միմեանց եւ բնաւ արհամարհելի են-  
թագրութիւն չէ, որ մէկի յառաջաբանը կամաւ-  
կցուէր միւսին մի ամբողջութիւն կազմելու եւ  
ուրոկլի բերանը դնելով Եզնիկի խօսքերը Սահակի  
եւ Մաշթոցի Հեղինակութիւնը բարձրացնելու  
համար։ Աւելորդ կասկածամտութիւն չէ, քանի  
որ օտար միջամտութեան հետքերը Պրոկլի  
թղթում անուրանալի են։ Ուշագրաւէ այստեսա-  
կէտից եւ նրա վերջաբանութեան մի կտորը,  
որ չկայ յունարէնում, եւ ուր յիշւում են  
Նեստոր եւ Թէոդոր («Եւ մի ի նզով ի դժոխս  
կործանեսցի»)։ Այս խորթ յաւելումը ար-  
դեօք նոյն եզնկեան թղթից չէ՝ առնուած։ Ինչ  
եւ լինի նրա ծագումը, անպայման, միտումա-  
ւոր յաւելուած է<sup>1</sup>, որ նպատակ ունի ընդ առաջ  
գնալ Սահակի եւ Մաշթոցի պատասխան-թղթի  
մի կարեւոր կէտին։

Սրանք իրենց պատասխանում նախ հաւա-  
տացնում են, որ միջոցներ են ձեռք առնուած մո-  
լորութեան դէմ։ Վթղթոյդ արտմակից եղեալ...

<sup>1</sup> Զնդոյեան, որ ըստ Հ. Վարդանեանի (ՀԱ. 1921).  
Հրատարակել է Պրոկլի թուղթը 1890 ին Պատկեր թերթում,  
կարծում է, որ յաւելուածը պատկանում է Լիբիրատի մօտ  
յիշուած Բարսեղ Պարկաւաղին։ Բարսեղը հայ շրջաններին  
մօտ մարդ է։ Նորա ազդեցութեամբ կարող էր Եզնիկ յիշել  
այն անունները, որից այնպէս խուսափում էր զգուշաւոր  
պրոկլը, եթէ ընդունենք, որ յաւելուածը Եզնիկից է առ-  
նուած։ Բ. յս մտքով իրաւացի է Զնդոյեանի կարծիքը։

յամենայն տեղիս որ շուրջ զմեւք բնակեալ էին յղեցաք մեծ եւ պատուհասալից պատուիրանաւ մի լսել ընաւ ամենեւին զայդպիսի բարբարոսս (երեւի, բորբորիտու), մի ընդունել ամենեւին զվասարեր կորստական մոլորական հերեսիութեան վարդապետութիւնն (էջ 10):

Իսկ թղթի վերջում յայտարարում են. « Եւ որ Թէոդորեայ Մամունստացւոյ աշակերտեալք իցեն առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան, ի հարկէ չան լիցի մեզ խլել զխոցն եւ զգայթակղութիւնն զայն ի միջոյ ի բաց կռուսանել » (էջ 13):

Օտարոտի են Թէոդորի հասցէին ուղղուած խօսքերը: Երեւում է, որ որոշ հարցի պատասխան է: Սակայն Պրոկլի թղթում այդպիսի հարց չկայ, եւ Թէոդորի անունը չի լիշտում: Ակամայից կասկած է ծագում պատասխանի հարազատութեան դէմ: Աւելի ճիշդ ասած, թւում է թէ ուրիշ թղթի պատասխան է, յարմարացրած Պրոկլի թղթին:

Եւ յիրաւի: Մելիտինի եպիսկոպոս Ակակի  
« Թուղթ առ սուրբ Սահակ հայոց հայրապետ, գրութեան մէջ, կարդում ենք ».

« Բայց մեզ երկիւղ է թէ գուցէ ի Թէոդորեա <յ> Մամունստեայ ուսմանէն (յօրին. ոխմանէն) աշակերտեալ ոք գտցի եւ ի չար ժանգէն Նեստորի ի միամիտ անձինս ազդիցէ. զե զնորա մնացեալ գրեանն, իբրեւ ինգիրս այս յայտնեցաւ եւ մանաւանդ որ վասն մարմնախա-

ոինն գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհաժողով եպիսկոպոսացն որ յԵփեսացւոց քաղաքին եղեւ ի մի մի վայր ժողովել զբնաւ գրեանն եւ այրել, (Էջ 15):

Անտարակոյս, Ակակի այս երկիւղն է այն խնդրելի կէտը, որ պարտաւորացրել է յիշեալ վիճելի պատասխանը: Ուրեմն Պրոկլի թղթի պատասխանը նկատի ունի Ակակի եւ ոչ Պրոկլի թուղթը:

Մեզ հասած է, սակայն, եւ Ակակի թղթի պատասխանը: Խնդիրն այն է, որ այդ պատասխանը ոչնչով չի զանազանում այն թղթից, որ կրում է պատասխան թղթոյն Պրոկլի, վերնագիրը: Միեւնոյն գրութեան կրկնակի պատճեններ են ըստ էռութեան: Տարբերութիւնն այն է, որ Պրոկլի պատասխանի մէջ մուծուած է մի հատուած, բաղկացած գլխաւորապէս հաւատոյ հանգանակից: Բացի գրանից Թէոդորին վերաբերեալ կէտը Ակակի պատասխանում համառօտ է եւ առանց անուան յիշատակութեան, այսպէս այլ յաղանդոյն որ գրեցեր գարշել առ ժամանակս ի շնորհս աստուծոյ, այսպիսի ինչ չեւ է հասեալ. ապա եթէ իցէ ինչ ծածկեալ ի ժանդոյ անտի ի հարկէ ջան լիցի իւել զիսոն ի միջոյ. (Էջ 18):

Կարելի էր կարծել, որ միեւնոյն թղթի օրինակներն, որքան եւ անպատեհ, զրկուած են եւ Պրոկլին եւ Ակակին: Բայց քանի որ վերեւ պարզեցինք, որ Պրոկլի թուղթն հետեւանք էր հայոց գիմումի եւ իբր դաւանաբանական ճառ

Հաւատոյ մասին, ուրիշ ուստի պատասխանի պէտք չունէր, մնում է ենթադրել, որ թողթը սկզբնապէս միայն Ակակի համար է եղել պատրաստուած։ Յետագայում նոյն օտար ձեռքը, որ Պրոկլի թղթին այն ձեւն է տալիս, իբր թէ նա է առաջին գրողը եւ հայերը՝ նրան պատասխանողը, նոյն ձեռքը հարկադրում է կազմել կեղծ պատասխան առ Ակակ թղթի հետեւութեամբ։

Այս տեղի է ունեցել Կոմիտասից յառաջ, քանի որ Կնիք հաւատոյն արդէն ծանօթ է Սահակի եւ Մաշթոցի պատասխան թղթին (էջ 129) Արդեօք այս միջոցին է մռնծուած եւ վերոյիշեալ յաւելուածը Պրոկլի թղթի վերջաբանութեան մէջ, որպէս զի արդարացուին Սահակի եւ Մաշթոցի պատասխանի ակնարկները թէոդորի հասցէին։ Եզնիկի եւ Պրոկլի թղթերի խառնումը պատահական թէ դիտաւոր Կոմիտասից յետոյ է։ Եթէ ընդունենք, որ դիտաւորեալ է, յաւելուածը պիտի վերագրել այն ձեռքին, որ խառնել է յիշեալ թղթերը, վերցնելով այն Եզնիկից<sup>1</sup>։

1. Հ. Արդանեան իր ընտիր սրբագրութեան մէջ հանում է բնագրից միանգամայն Աթեանց եւ Մարքիծ ոնեացոկամ ԱՄաթեայ եւ Մարաթօնովոյ, „առեղծուածոյին անունները։ Թւում է թէ վաղաժամ է։ Երկու անգամ՝ կրկնուող անունները կարող են, եթէ պարզուեն, թերեւս ժամանակագրական նշանակութիւն ունենալ։ Մարաթոնը՝ Նիկոմետացի եպիսկոպոս էր եւ Մակեդոնի հետեւորդը, ուստի եւ երրեննորս անունով է կոչում Մակեդոնի աղանդը։ Ինչպէս պիսցում է Սոկրատ, Եկ. պա. II 45։ Αἰαὶ καὶ Μαραθωνιαῖος καλοῦσιν αὐτοὺς. Ցիշում է նաև Պոկերերան. Ἀριος, Ευνόμιος, Μαραθώνιος, Migne, P. G. 59, col. 569.

Թէոդորի անուան հանդեպ որոշ նրբանկատութիւնը հասկանալի պիտի լինի մանաւանդ եթէ չմոռանանք նրա մերձաւոր ծանօթութիւնը Մաշթոցի հետ։

Մեզ հետաքրքրող թղթերի վերայ նկատելի է Զ. դարի դաւանաբանական վէճերի հեռաւոր ստուերը։ Յայտնի է, որ Եփիեսոսի ժողովի գործերը եւս զերծ չեն Ե. տիեզերական ժողովի շնչից։ Աեցերորդ դարի առաջին կիսում, երբ հայ եկեղեցին մարտնչում էր Նեստորականութեան դէմ, բնաւ ցանկալի չէր ցոյց տալ, որ Նեստորի ուսմունքը յայտնի էր Հայերին՝ տակաւին հայ դպրութեան արշալոյսին։ Միանգամայն խոտելի պիտի թուեր Մաշթոցի եւ կամ Սահակի ծանօթութիւնը Նեստորի ուսուցիչ Թէոդորի հետ։

Ակակի եւ Պրոկլի պատասխան թղթերում մեղմացրած են այն տեղերը, ուր խօսքը Թէոդորի և Նեստորի մասին է։ Ինչպէս վերեւ բերած կտորներից կարելի է տեսնել, միանդամ խոստովանում են Նեստորականների գործունեութիւնը, ասելով որ ամեն կողմ մարդ է ուղարկուած և մեծ եւ պատուհասալից պատուիրանաւ մի լսել բնաւ ամենեւին զայդպիսի բարբարոսս։ Իսկ միւսանգամ կարծես ժխտում է։ “Ի շնորհացն աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ” աւելացնելով զդուշութեամբ “ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան”։

Ակակի երկրորդ թուղթն, ողջուած հայ նախարարներին, վկայում է, որ արդարեւ Նես-

տորական քարոզը մուտ էր գործել Հայաստան։  
 «Աղաչեմք, մի ոք զձեզ խարեսցէ, գրում է Մի-  
 լետինի եպիսկոպոսը, մի՛ պատուականութիւն երե-  
 սաց, մի՛ բազմութիւն, մի՛ թողացուսցուք զճշմարիտ  
 հարցն կրաւնս եւ զհաւատ որով հաւատացայքն,  
 որով ապրեցայքն. զայս հարկեցայ գրել առ  
 սէր ձեր. զի ի գալ առ մեզ սիրելեաց մերոց  
 երիցանց Հռնայ, Քոթայ, Անձնայ, պատմել մեզ  
 զբարի գործսն զոր գործիցէք, զի զդրեալսն  
 Դիոդորի կապեցէք, կնքեցէք։ Այդ մի ոք հա-  
 ւանեցուսցէ զձեզ տալ անդրէն զայնոսիկ, որք  
 փութով եւ ախորժելով ստանան զայն ի կոր-  
 ծանումն ստացողաց նոցա եւ լսաւղաց. զի եթէ  
 Նեստորիոս վերացաւ յամենայն եկեղեցեաց,  
 զիարդ Դիոդոր<ի>ն գիշքն եւ ուսումն  
 (Յօրին. Խումմն) ընդունելի իցէ, որք զնոյն միտս  
 եւ վնասակարութիւն ունին, (Էջ 21):

Դիոդորը Թէոդորի ուսուցիչն է. վերջերը  
 նրան եւս յայտարարեցին եկեղեցական հայրերը  
 մեղապարտ նեստորականութեան համար։ Սա-  
 կայն Ակակի ժամանակ կասկածի տակ էր բռնուած  
 Թէոդորը։ Սորա մասին էին գրել հայերին թէ  
 Ակակը եւ թէ Եղեսիայի եպիսկոպոս Ռաբուլը։  
 Այս երեւում է ոչ միայն Ակակի քանիցս եղած  
 թղթից, այլ եւ Լիբերատի վկայութիւնից, որ  
 բերեցինք վերեւ։ Թէոդորի տեղ Դիոդորի յի-  
 շատակութիւնը արժանի է ուշագրութեան։

Դառնանք այժմ կորիւնին, Մաշթոցի կեն-  
 սագրին։ Կորիւնին քաջ յայտնի է Թէոդոր Մա-  
 մուեստացու անուան շուրջը յարաւցած աղմուկը։

“Յայն<մ> ժամանակի, պատմում է Կորիւն, բերեալ երեւեցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատռմբ, ընդունայնաթաւս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում Թէոդ<որ>իոս անուն: Ալասն որոյ սիւնհոդոսական Հայրապետաց եկեղեցեացն սրբոց նշանակեալ աղդ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայեւ. Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջյ բարձեալ աշխարհականած արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ”:

“Այլ ոմն հոռոմ Թէոդիոս անուն, որ իրաւամբ ուղղելի է Թէոդորոս (Թերեւս ձեռագրի Թէոդրոս սխալ ընթերցմամբ Թէոդիոս) ոչ այլ ոք է եթէ ոչ Մամուեստայ յայտնի եպիսկոպոսը:

Այս մասին կասկած լինել չե կարող: Օտար աղբիւրներից յայտնի փաստերը, որոնց վերայ ծանրացանք վերեւ, հաստատում են Կորիւնի խօսքերը, այլ եւ նոր լոյս են սփռում Հայ հեղինակի կցկտուր տեղեկութեան վերայ: Միւս կողմց Մաշթոցի աշակերտի եւ կենսագրի կարծես ակամայ խոստովանութիւնը Թէոդորի մասին նշանակալից է եւ վկայում է յօգուտ Խառօսիութիւնը առաջարկածս սրբագրութեան:

Կորիւնի երկը քննութեան պէտք ունի, որ թողնելու է ուրիշ անգամուայ, որպէս զի ըշեղուենք մեր անմիջական խնդրից: Նկատենք, սակայն, որ Մաշթոցի կենսագիրը շատ հեռու է

բաւարարելու այն պահանջներին, որ կարելի առաջադրել մի աշակերտի, որ գրում է իր ուսուցչի կեանքը: Կորիւնը, որքան ճոռոմարան, Նոյնքան սակաւագէտ է: Գուցէ եւ աւելի գիտէ, քան յայտնում է մեզ: Խոստմնալից յառաջարանը, որ ուզում է նաւել զհամատարած ալեօն վարդապետական ծովուն, նման է շքեղ մռաբի, որ տանում է մի խեղճ անակ: Ուստի եւ վերջարանութիւնը, ուր յայտարարում է, որ "ոչ եթէ ի հին համբաւոց տեղեկացեալ, մատենագրում է, այլ "որոց մեր իսկ ականատես եղեալ, թողնում է բոլորովին հակառակ տպաւորութիւն:

Ականատեսից շատ աւելի կարելի էր սպասել, մանաւանդ այնպիսի խնդրում, ինչպէս է հայ գրի եւ դպրութեան ծագումը: Մաշթոցն աւելի քան արժանի էր, որ երախտապարտ սերունդը գիտենար նրա կեանքը եւ նշանաւոր յղացման մանրամասնութիւնները:

Դժբախտաբար, Կորիւնի պատմութիւնից յետոյ էլ գրերի գիւտը մնում է գաղտնիք, Մաշթոցին տանում է Կորիւնը ասորական քաղաքները, Ամիգ եւ այնտեղից Եղեսիա, եւ ուրիշ քան չէ ասում նրա ճանապարհորդութեան եւ կամ նրա ելքի մասին քան այն, որ Եղեսիայում երկար տքնութիւնից յետոց նրան "պարգեւէր վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սրանը ելի սուրբ աջովի իւրով նշանագիրս հայելէն լիզուին:

Եղեսիայից գնում՝ է Մաշտոց Սամոսատ, որպէս զի Հռովհանոս ոմն հմուտ գրիչի օգնութեամբ և զամենայն ընտրութիւնս նշանագրոցն... յօրինեալ, եւ յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնայ:

Սամոսատից գալիս է նորէն Եղեսիա եւ տեղւոյն եպիսկոպոսի թղթով իր նորագիւտ տառերով վերադառնում Հայաստան և ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային հայոց։ Ղազար Փարպեցու գիտելով, Վռամշապուհ գահ էր բարձրացել պարսից Շապուհ թագաւորի օրով (383—388)։ Կորիւն, աներկրայ, այլ կարծիք ունի յիշեալ թագաւորի ժամանակի մասին, քանի որ պարզ յայտնում է. « Դպրութիւն հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն, Յազկերտն թագաւորել է 399 թուին (պարսկական տարին սկսում էր Օգոստոսի 14ին)։ ու ընթիւ, ու թերորդ տարին գալիս է 406 Օգոստոսի—407 Օգոստոսի։

Սակայն եւ այս թուի արժեքը նսեմանում է եւ գրեթէ ոչնչանում, երբ Կորիւնը հաւատացնում է, որ Մաշտոցը և բթեալ հասանէր ի կողմանս Արամի ի քաղաքս երկուց ասորոց, որոց առաջինն Եղեսիա կոչի եւ երկրորդն Ամիդ անուն, ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն բարիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս ։

Արդարեւ, արտաքին աղբիւըներից քաջայայտ է, որ Ակակը Ամիդի եպիսկոպոսն էր մօտաւորապէս սկսած 419/420 թուականից։

420 թուին իրրեւ նոյն քաղաքի եպիսկոպոս ներկայ էր Եշհրալահի ժողովին<sup>1</sup>. Թէոդոս կայսեր եւ Վռամ թագաւորի զինական բախումների ժամանակ Ակակը հանդիսանում է նաեւ իրրեւ քաղաքական գործից եւ 422ին կայսեր կողմից Վռամի մօտ զրկւում եւ թերեւս որոշ գերունում. Խաղաղութեան դաշինք կնքիլու նոյն թուին (Սոկրատ., Եկ. Պատմ. Ե, 21):

Ինչ վերաբերում է Բարիլասին, սա ոչ այլ ոք է եթէ ոչ Եգեսիայի հոչակաւոր Ռաւուուլ(աս) եպիսկոպոսը. Եւ ուրեմն՝ Բարիլաս ուղղելի է Ռարիլաս:

Աս եպիսկոպոսական աթոռի վերայ էր 412—435<sup>2</sup> Եփեսոսի ժողովի մասնակից էր. սկզբում Յովհաննես պատրիարքի, այսինքն, նեստորականների բանակում, բայց յետոյ 431—432ին անցաւ Կիւրեղ Աղեքսանդրացու կողմը, ինչպէս պատմեցինք վերեւ:

Եթէ Մաշթոց Ամիդում ներկայացել է Ակակին եւ Եղեսիայում Ռաբուլին, այդ կարող էր լինել 420ից ոչ յառաջ եւ ոչ ուշ քան 435: Եւ եթէ իրաւ այդ ճանապարհորդութեան հետ է կապուած տառերի գիւտը, ակներեւ է, որ նա չէր կարող տեղի ունենալ Յաղ-

<sup>1</sup> Chabot, Synodicon Orient, p. 276. Հման. Labourt, Le Christianisme dans l'empire perse, էջ 101.

<sup>2</sup> Ըստ “Ժամանակագրութեան Եղեսիոյ Ռաբուլ աթոռ” է Նոտել 723ին Սելէկեան — 412 եւ մեռել է 746. Տ Օգոստ. — 435. Տ Օգոստ., Chronique d'Edesse, Texte und Untersuchungen Harnack, IX, 1.

կերտի ութերորդ տարին — ժամանակական անհեթեթութիւն։

Դարձեալ Կորիւնը պատմում է, որ Մաշթոցը ցանկալով նոր գիւտի բարիքը տարածել եւ Հայաստանի յունական բաժնում, ստիպուած է լինել գնալ կայսեր մօտ թոյլտուութիւն խնդրելու։ Եւ զարմանալի է, որ Հետը առնում տանում է “զբազմութիւն աշակերտացն ի քաղաքն Մելիտինացւոց եւ յանձն առներ սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին։ Եւ գլխառոր աշակերտացն թողոյք զայն, որում Ղետոնդէոսն կոչէին։ Իսկ ինքը Դերջանայ Գնիթ եպիսկոպոսի հետ ուղեւորում է մայրաքաղաք եւ “մտեալ առաջի պատուական աթուոյն յանդիման լիներ աստուածակարգ թագաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատմիկոս կոչէին։”

Մելիտինի եպիսկոպոս Ակակը նոյն անձն է, որի մասին խօսեցինք վերեւ, ջերմ կիւրեղական եւ անվեհեր պսյքարող Եփեսոսեան վեճերի ժամանակ Անտիոքեան կուսակցութեան դէմ։ Յիշեցինք նրա թղթերը հայերին։ Այն զիտնականները, որոնք ամեն կերպ աշխատում են կիւրեղին քարշել դէպի քաղկեդոնականութիւն, չեն վարանում Ակակին իր անյօղդողդ հետեւականութեան համար անուանել միարնակ։

Հիները ամենայն դէպրում այլ կարծիք ունեին նրա շիտակ գործունեութեան մասին։ Եւ նրա ուղղամտութեան փայլուն վկայականն այն է, որ թէ յշյն եւ թէ լատին եկեղեցին տօնում են

Նրա յիշատակը սրբերի շարքում, առաջինը՝  
ապրիլի 17ին Տօն էն աշխատավոր համար՝ Աշա-  
ճիօս, արχιεπիսկոպոս Մելիտինի, տօն ծաստատոսր-  
ցոն. իսկ երկրորդը՝ Մարտ ամսի 31ին, նաեւ  
Սեպտ. 15ին:

Կ. Պոլսի պատրիարք Ատտիկը մեռած է  
10 Հոկտ. 425: Ասել է թէ Ա աշխատավոր այն-  
տեղ պէտք է եղած լինի 425ից յառաջ, եւ  
ուրեմն առաջին այցը Ամիգ եւ Եղեսչա ընկնում  
է ոչ միայն 435ից այլ եւ 425ից յառաջ: Ի  
միջոցի 420—425 տարիների Մաշխոց դառ-  
նում է Հայաստան եւ Հասեալի նոր քաղաքն  
յանդիման լինէր սրբոյ Եպիսկոպոսին Սահմակայ  
եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս  
կոչէին:

Այնուհետեւ “երկու երանելիները, Մաշ-  
խոց եւ Սահմակ սկսում են պարապել թարգմա-  
նութեամբ” ըստ յառաջագոյն սովորութեան: .  
“Որոց դարձեալ գէպ լինէր, պատմում է Կո-  
րիւն, եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել  
ի կողմանս ասորոց ի քաղաքն Եղեսացւոց, զՅով-  
սէփի եւ երկրորդն Եղնիկ յայրարատեան զաւա-  
ռէն ի Կողը գեղջէ, զի յասորական բարբառոյն  
զնոցին Հարցն սրբոց զաւանդութիւնս Հայերէն  
գրեալս դարձուսցեն: Իսկ թարգմանչացն Հա-  
սեալ ուր առաքեցան եւ կատարեալ զհրամանսն  
եւ առ պատուական հալսն առաքեալ գնային  
ի կողմանս յունաց, ուր եւ ուսեալք եւ տեղե-  
կացեալք թարգմանիչս կարգէին ըստ Հելլենա-  
կան լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ  
անցելոյ դեպ լինէր ումանց եղբարց ի Հայաստան  
աշխարհէս դիմել իջանել ի կողմանս յունաց որ  
եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր եւ երկրոր-  
դին Կորիւնս եւ մատուցեալ յարէին յեզնիկն  
իրքեւ առ ընտանեգոյն սննդակից ի Կոստանդի-  
նական քաղաքին եւ անդ միաբանութեամբ հո-  
գեւոր պիտոյիցն զիսնդիրն վճարէին։ Որոց յետ  
այնորիկ Հաստատուն աւրինակաւք աստուածա-  
տուր գրոցն եւ բազում շնորհագիր հարց յետ  
այնը աւանդութեամբք եւ Նիկիական եւ Եփե-  
սոսական կանոնաւք գային երեւելով աշխարհին  
հայոց եւ առաջի զնէին հարցն զբերեալ կտա-  
կարանսն եկեղեցւոյ սրբոյ։

“Յետ այնորիկ և յետ ժամանակի ո  
անորոշ դարձումները ցոյց են տալիս, որ կամ  
պատմիչն անգէտ է եւ կամ չի ուզում ճշգրիտ  
լինել որեւէ դիտաւորութեամբ։

Պետոնդէոսի եւ Կորիւնի երթը Կ. Պոլիս  
կայացած պիտի լինի Եփեսոսի ժողովից յետոյ.  
եւ ոչ շատ ուշ՝ քանի որ նորա որոշումները  
տակաւին չէին հասել հայերին եւ Պետոնդն ու  
Կորիւնն էին, որ բերեցին։ Տեսանք, որ Լիբե-  
րատը յիշատակում է երկու հայի առաքումն ի  
Կ. Պոլիս Պրոկլ պատրիարքի մօտ, որոնց անուն-  
ներն են Պետոնդէոս եւ Aberium. Վերջին ա-  
նունն, անշուշտ, աղաւաղուած է. Հ. Չամչեանը  
ուղղում է Արքահամ առանց որեւէ հիմքի  
(I, 527): Մեզ թւում է, որ Լիբերատի յայտնի  
գեսպանութիւնը նոյնն է, ինչ որ յիշում է Կո-

ըիւնը եւ որին մասնակցել է ինքը։ Ոչ միայն ժամանակը, այլ մանաւանդ Ղեւոնդի անունը երաշխաւորում են մեր վարկածի։ Հաւանականութիւնը :

Ղեւանդը վարդանանց պատերազմի հոչակաւոր երէցն եւ նահատակն է։ Պատգամաւորութեան երկրորդ անձը, որ ըստ Կորիւնին, ինքն է, հետեւաբար, նոյնանում է Լիբերատի Աերիումի հետ. ինչպէս մեկնել Կորիւն եւ Աերիում անուանց յարաբերութիւնը, դժուար է գուշակել։ Լիբերատի աղբիւրը Եփեսոսի ժողովի արձանագրութիւններն են եւ Կիւրեղի նամակները — յիշատակարաններ, որոնք գրուած են եղել յունաբէն։ Արդ Կորիւն գրուած չարւոնախընթաց չաւ շաղկապի ազդեցութեամբ և օնուուն չաւ կարող էր դիպուածով կորցնել սկզբի հնչիւնը, dittographie թուելով գրշին։ Հնագրութեան տեսակէտից անհնար չէ նաեւ սկզբի կօ-կամ կաս-ի իրը ասէ-թիւր ընթերցումը։ Լատինն ուրեմն, կարդացել է աՅ փոխանակ առե <կաս-.

Թերեւս առարկուի, որ Կորիւնի ասելով  
նրա եւ զեւոնդի յանձնաբարական էր հոգալ  
հոգեւոր պիտոյից խնդիրն եւ “աստուածատուր  
գրոց հաստատուն օրինակ”ը, մինչդեռ Լիբերատի  
յիշատակած դեսպանութիւնը դաւանաբանական  
լուրջ հարցի համար էր. Կորիւն, եթէ մասնակից  
էր, չէր կարող անգիտանալ եւ ուրեմն աւելի  
սույգ տեղեկութիւն պիտի սպասէինք նրանից:  
Արդեամբ իրաւունք ունինք կասկածելու

Կորիւնի ճշմարտախօսութիւնը, աւելի ճիշտ ծածկամտութիւնը։ Եզնիկ եւ Յավսէփ Եղեսիայից անցել էին Ա. Պոլիս եւ դեռ այնտեղ էին, երբ եկան Ղեւոնդ եւ Կորիւն։ Ի՞նչ պէտք կար նոր մարդ զրկելու հեռաւոր մայրաբաղաքը սուրբ գրքի ստոյդ օրինակը լեցելու համար։ Բաւական էր պատուեր ուղարկել Յավսէփին եւ Եզնիկին, մասնաւոնդ որ ուրիշ նպատակ էլ չունեին սրանք։ Եթէ ոչ թարգմանական գործունեութիւն։ Ակնյայտնի է, որ նոր դեսպանութիւնը մի այլ առաքելութիւն պիտի ունեցած լինի։ Եզնիկին յարելը եւ միարանութեամբ հոգեւոր պիտոյից զիսնդիրն վճարելը գուցէ խուլ ակնարկ է եւ լնդ հանուր բնորոշում այն յանձնարարութեան, որի մասին խօսել ի լուր աշխարհի անպատեհ է համարում մեր պատմիչը։

Կորիւնը հասարակ կենսադիր չէ, նա եւ եկեղեցական գործիշ է եւ իբր այդպիսին պէտք է իր գրիչը համակերպէր յետելիսոսեան տրամադրութեան։ Հայոց կապերը Ասորիքի հետ այժմ պիտի խորշելի թուեր։ Մենք տեսանք, որ Եփեսոսի լնդղիմադիր ոյժերը կենդրանացան Անտիոքի Աթոնի շրջանում, գլուխ ունենալով պատրիարքին։ Հայերը բռնել էին որոշակի Աիւրեղի կողմը։ Մելիտինի եպիսկոպոս Ակակը, որ երեւում է եւ ծագումով մօտ էր Հայերին, վճռական դեր ունեցաւ եւ այս խնդրում, հաւատ ներշնչելով իր Հայրենակիցներին նո նպաստեց մեծապէս Աիւրեղեան հոսանքի յաղթանակին։ Հայ եկեղեցու Եփեսոսեան դաւանանքի հիմը

գրուեցաւ, որ այնուհետեւ մնաց անսասան գարերի ընթացքում։ Ոչ միայն Կիւրեղին նրա անմիջական մասնակցութեան, այլ եւ Մելիտինի նշանաւոր եկեղեցականին եւ նրա ջանքերին է պարտական հայ եկեղեցին իր գաւանաբանական խարիսխը։

Թութեամտութիւն կը լինէր կարծել Ահրերատի հետ միասին, թէ անդիտութիւն էր պատճառը, որ հայերը դիմեցին Պրոկլին։ Տարաձայնութիւնները անխուսափելի էին նաեւ Հայոց մօտ նոյն Եփեսոսեան վէճերի շուրջը։ Հայատանի հարաւային մասերը, շնորհիւ խառն ազգաբնակութեան, ունէին նաեւ ասորի եպիսկոպոսներ, այսինքն հպատակում էին Տիղբոնի եկեղեցուն։ Աղձներից, Սոկաց աշխարհների կողմից յիշւում են ներկայացուցիչներ Ասորի եկեղեցու սկզբնական ժողովներին. այսպէս 420 եւ 424ի գումարումներին ներկայ էին Դանիէլ եպիսկոպոս Աղձնեաց աշխարհից, Ատտիկը՝ Մոկաց եւ Նոյն իսկ Հայատանից՝ ոմն Արտաշահը եպիսկոպոս (Chabot, Synodicon)։ Այս աթուները վարչապէս կտպուած էին այն եկեղեցու հետ, որ յետոյ նեստորականութեան միակ ապաստարանը դարձաւ։ Արանց ազդեցութիւնը բաւական էր, որ ունէր որոշ տրամադրութիւն ընդդեմ Եփեսոսի։ Թուում է, որ կար եւ ուրիշ հանդամանք՝ նոյն տրամադրութիւնը զօրացնելու համար։

Ռաբուլ եւ Ակակ, Ահրերատի ասելով, զգուշացնում էին հայ եպիսկոպոսներին, որ չըն-

դունին Թէոդորի գրուածները։ Ի՞նչ գրուածների մասին է խօսքը։ Կորիւնը հաստատում է, որ իրաւ Թէոդորի գիրք սուտապատում բերեալ երեւեցան Հայաստան աշխարհի։

Երբ Նեստորի գրքերը արգելուեցան կայսերական հրամանով imperiali legē prohibitum, ըստ նոյն Լատին պատմիչի, Նրա հետեւորդները սկսեցին տարածել Թէոդորի եւ Գեղողորի գրուածները, թարգմանելով ասորի, Հայ եւ պարսիկ լեզուներով։ Կայսերական օրէնքը հրատարակուեցաւ ի հիւպատոսութեան Թէոդոսի XV եւ Վալենտիանի IV data III non. august. ըստ cod. Theod. եւ III calend. august. ըստ cod. Just. որ է 435, 30 Յուլիս. Պրոկլի թուղթը Հայերին կրում է նոյն տարեթիւը 435 (consul. Theod. XV et Vol. IV)։ Ենթաղբենք, որ պատրիարքական թուղթը նոյն տարուայ վերջին ամսին է զրկուած։ Օգոստոսից — Գեկտեմբեր, քանի մի ամսուայ ընթացքում անհնար էր թարգմանել Թէոդորի գրքերը, զրկել Հայերին, որպէս զի այդ հետեւանքով Առարուլ եւ Ակակիրով զգուշացնեին աղանդամիտ գրքերից, եւ յետոյ Հայերը ժողով գումարէին եւ գիմեին Պրոկլին եւ պատասխան ստանային։

Պարզ է, որ խնդիրը նեստորականների նորաթարգման գրքերի մասին չէ։ Պէտք է ենթաղբել, որ Թէոդորի գրուածները յայտնի էին Հայերին մինչեւ Եփեսոսի վէճերը, եւ յայտնի էին այնպիսի պայմաններում, որ նպաստաւոր էին Նրա հեղինակութեան եւ անհանգ ստացուցիչ

Եփեսոսեան հաւատի պաշտպանների համար, որպիսիք էին Ռաբուլ եւ Ակակ:

Արդ ովլ, եթէ ոչ Ռաբուլ եւ Ակակ, պէտք է գիտենային, որ Թէոդորը գրագրութիւն է ունեցել Հայ լուսաւորութեան հօր Հուչակաւոր Մաշթոցի հետ։ Թէոդորը մեռած է 428ին եւ եպիսկոպոս էր 392 թուից, նա ժամանակակից է բառի բուն մտքով Մաշթոցին։ Ազգային գիր եւ գրականութիւն ստեղծելու մեծ մտքով յափրշտակուած Հայ վարդապետը, որ իր երազների համար շրջել էր Մելիտին, Ամիդ, Եղեսիա, Սամոսատ, այցելել ծանօթացել էր եւ Ակակին, Ռաբուլին, միւս Ակակին, Մելիտինի եպիսկոպոսի, այլ եւ Սամոսատի եպիսկոպոսին, միխօսքով Հայաստանի սահմանակից Դշանաւոր Հոգեւոր գործիչներին, նա չէր կարող զանց առնել նոյն շրջանի ամէնից Հեղինակաւոր եւ գիտնական եկեղեցական հօր Թէոդորոս Մամունստացուն։ Իր ճոխ գիտութեան համար նա արժանացել էր Polyhistor = բազմավէպ հնչման Անակնունելի չէ բնաւ, որ Թէոդորի ծանօթ Հայազն եպիսկոպոս Մաստուրիոսը լինի Մաշթոցը։

Մի բան, սակայն, վրիպելու չէ ուշադրութիւնից։ Թէոդորը գրել է Մաստուրիոսին իր քահանայութեան ժամանակ։ Թεοδόρου πρεσβυτέρօς է ասուած Խորագրում։ Բարեբախտաբար Թէոդորի կեանքը բաւականին ծանօթ է։ Թէոդորիտի ասելով (Եկ. Պատմ. Ե, 39), Թէոդոր մեռել է 78 տարեկան հասակում, եւ եպիսկո-

պոս էր 36 տարի, այն է սկսած 392ից։ Իսկ քահանայ, է ձեռնադրուած 383ին։ 392ին Թիոդորի աջակցութեամբ ստանում է Կիլիկիայի Պամուխստա քաղաքի եպիսկոպոսական աթոռը։ Այսպիսով նրա երեցութիւնը ընկնում է 383—392 տարեցքանը։ Հետեւապէս այս տասնամեայ միջոցին պէտք է գրած լինի Մաշթոցին։

Թէոդորի աշակերտն էր Առուփին(ոս) անունով քահանայ որ 399ին Հռոմ մեկնեց եւ այս տեղ ծանօթանալով Պելագիոս քահանային նորա միջոցով Պելագիական կոչուած վարդապետութեան խսկական հիմնադիրն եղաւ։ Պելագիականները շեշտում էին իրենց հոգեւոր կապը Թէոդորի հետ։

Մեզ թւում է, որ այս Առուփինը ուրիշ անձն չէ, եթէ ոչ այն գրիշ Հռուփիանոսը, որը յիշելում է գրերի գիւտի պատմութեան մէջ։ Եթէ Թէոդորի աշակերտը իրրեւ սոսկ գրիշ մասնակցում է գիւտին, հարկաւ, նրա ուսուցիչն աւելի շօշափելի նպաստ պիտի բերած լինէր նոյն խնդրին։

Թէոդորի քահանայութիւնը անցել է Անտիոքում, իր ծննդավայրում։ Նրա դասընկերն էր եւ մաերիմը հոչակաւոր Յովհան Ասկերերանը, որ քահանայ էր միեւնոյն Անտիոքում։ Խորենացու յիշած գանգատը յոյների կողմից, թէ ինչու հայերը Ասկերերանին չեն դիմել, գուցէ, եւ զօղանջէ այն իրողութեան, որ Թէոդորի եւ Ասկերերանի շրջանումն է, որ Մաշթոց յաջողել է հայ գրերի գիւտը եւ հետագայում, ոմանք Թէո-

գորին էին վերագրում, ուրիշները՝ Ոսկեբերանին այդ մեծ շնորհը:

Սրանով ընդգծում է գուերի գիւտի համար որոշ եւ դրական տարեթիւ՝ 383—392 տարիների տասնամեայ միջոցը։ Տեղը չէ կանգառնել մեր այս ենթադրութեան վերայ եւ նրա հաւանականութեան հիմերը մեջ բերել։ Հայ գրերի ծագումը մութ է եւ ոչ ոք յանկարծակի չպիտի գայ մեր ենթադրութեան հանդեպ։

Մեր անմիջական նպատակի համար բաւական է նկատել, որ Թէոդորի սկզբնական ծանօթութիւնը Մաշթոցի հետ կարող էր տեղի ունեցած լինել վերջնիս տքուն որոնումների ճանապարհի վերայ։

Թէոդորը յայտնի էր իր բեղման որ գրչով։ Մի շաբք գրուածներ, ուղղուած են եղել հերձուածների դէմ։ Որոգին, Արիսու, Եւնոմ, Մակեդոն, Ապոլլինար, Հրեայ եւ հեթանոս ուսմանքներն ըրլորն ել առիթ են տուել նրան բանակուոի ասպարեզ իջնելու։

Այս տեսակ գրութեանց կարգին է պատկանում եւ այն, որ ուղղուած է եղել Մաստուբիսս հայ քորեպիսկոպոսին։ Երկու Ճառը նուիրուած է եղել հաւատոյ խնդիրներին τὰ περὶ τῆς εὐσεβίους πίστεως։ Կեստորական օգի է շնչելիս եղել մանաւանդ վերջին Ճառը, ինչպէս շեշտում է Փոտը։

Նոյն Փոտը ծանօթ է եւ մի ուրիշ գրութեան, ուր Թէոդորը τὸ Νεστορίου ծόγμα էι και πρὸ Νεστορίου ὑπῆρχεν ὑπερενγόμενος, այս-

ինքն ԱՆԵՍՏՈՐԻ դաւանանքն էր ործկում, թէեւ  
նրանից առաջ էր ապրել<sup>1</sup>:

Եկեղեցու Հայրերը իրաւունք ունեին կաս-  
կածելու, որ Հայերը կարող էին վարակուած լի-  
նել Թէոդոր-ԱՆԵՍՏՈՐԵան խմորով:

Թէոդորը լաւ ծանօթ էր Ուաբուլին:  
Սկզբում նիղակակից էին: Մամուեստայի եպիս-  
կոպոսը թէեւ մեռած, մասնակից էր Եփեսոսի  
վէճերին: Ուաբուլը լքեց Թէոդորականների դասը  
431ի ձմեռը եւ անցաւ Հակառակ բանակը: Կա  
էր, որ մերկացրեց Թէոդորի այսպէս ասած նես-  
տորականութիւնը:

Բնական էր սպասել, որ Ուաբուլը պէտք է  
յորդորէր եւ Հայերին խորշել Թէոդորից եւ նրա  
գըքերից: Անտարակոյս գիտէր, որ անգոսնելի  
այրը, որ տակաւին երէկ խոշոր դէմք էր, որոշ  
հոչակ եւ Հեղինակութիւն ունի Հայերի մօտ,  
Մաշթոցի Հետ ունեցած գրութեան Հետեւան-  
քով եւ նրա դեռ թարմ յիշողութեամբ:

Յաջորդ անցքերը ցոյց տուին, որ իրօք դիւ-  
րին չէր վարկաբեկ անել Թէոդորին: Հայ եպիս-  
կոպոսները փոխանակ խօնարհելու տիեզերական-  
ժողովի որոշման առաջ, Հարկաւոր են Համա-  
րում Հաւաքական խորհրդածութեամբ մարդ  
ուղարկել Կ.Պոլիս եւ տեղը իրազեկլինել ճշմար-  
տութեան:

Պրոկլ իր պատասխանում քաշւում է տալ  
Թէոդորի անունը. Նրա փափկանկատ լուսութիւնը,

<sup>1</sup> Photii Bib. 38. Θεοδώρου Ἀντιοχέως ἐραηνεία  
τῆς κτίσεως,, P. G. 103, col. 70.

որ շեշտում է հարցի ցաւոտ կողմը, հարկաւ կրքերը մեղմացնելու համար էր։ Հայ տարածայնութեանց եւ վեճերի վախճանը մօտէն յայտնի չէ։ Գիտենք միայն, շնորհիւ նոյն Աիրերատի, որ Չթէ Յ հայ վարդապետ կատաղի քարոզ սկսեցին ընդդէմ Թէոդորի։ Նրանք շրջում էին ամենուրեք Թէոդորի գրքերից քաղուածներ ձեռքերնին եւ պահանջում էին դատապարտութիւն։ Աիրերատը նրանց անուանում է Ապոլինարի հետեւորդներ, սակայն լատին եկեղեցականի բերանում եւ Ե. ժողովից յետոյ, այդ համազօր է զերմ կիւրեղականի։ Մոլեռանդ հակաթէոդորական վարդապետները, բացայայտ է, որ այն հոսանքի ներկայացուցիչներն են, որ յաղթող է հանդիսացել Հայաստանում։

Ոչ միայն Պլոկի, այլ եւ Վասիլ սարկաւագի թուղթն ընդդէմ Թէոդորի, ուղղուած հայերին, աննշանակ չեն անցել հայ վեճերի հետեւանքի համար։

Եփեսոսեան դաւանանքը յաղթանակեց։ Այս առթիւ հայերը վերստին պատգամաւորութիւն են ուղարկում մայրաքաղաք առանձին յանձնարարականով Պլոկ պատրիարքին, ինչպէս եւ գրում են Աղեքսանդրիոյ Կիւրեղ եպիսկոպոսին։ Աիրերատի թերի հաղորդագրութիւնը այս անցքերի մասին լրացնում է մի կարեւոր յիշատակարան, որ դիպուածով պահուել է Ե. տիեզերական ժողովի արձանագրութիւնների մէջ։

Այս ժողովի հինգերորդ նիստում կար-

դում են սիւրեղի եւ թէոդորի քաղուածներին կից եւ մի հատուած՝ Ex libellis porrectis a presbyteris et diaconis qui transmissi sunt ab episcopis et clericis et monachis et caeteris Magnae Armeniae et Persidis et aliis gentibus (Mansi IX, col. 240).

Յանձնաբարական նամակի հետ պատգամաւորութիւնն ունէր impia capitula թէոդորի, որ ներկայացրին Պրոկլին, ինչպէս պատմում է Նոյն յիշատակարանում. “porrecta sunt autem et impia capitula ex Theodori codicibus sanctae memoriae Proclu ab Armeniis,, Խօսքն այն քաղուած յիքի մասին է, որը յիշում է եւ Լիբերատը excerpta capitula կոչելով:

Migne արտատպելով յիշեալ վաւերագիրը Mansiի IX հատորից զետեղել է Պրոկլի առ. Հայութղթից առաջ (P. G. 65, col. 855). Ինչպէս երեւում է շփոթելով երկրորդ դեսպանութեան թուղթը առաջին դեսպանութեան թղթի հետ: Տեսանք, որ Ղեւոնդի եւ Արերիոնկորիւնի դեսպանութիւնը եւս ունէր libellum պատրիարք Պրոկլին ներկայացնելու: Այդ թուղթը մեզ չի հասել: Ե. այսպես կան ժողովի արձանագրութիւնների մէջ պահուած յիշատակարանը պատկանում է երկրորդ դեսպանութեան: Արդարեւ Լիբերատի մի կոչումը, որ գտնում ենք այս յիշատակարանում, հաստատում է մեր կարծիքը, որ կարեւոր է անցըելի յաջորդականութիւնը ըմբոնելու համար:

Լիբերատ վկայում է, որ 2—3 հայ վար-

գաղետները շրջելով ամբողջ արեւելքը պահանջում էին, որ նեստորամիտ հայրերը, նման թէոդորի եւ միւսների, նղովուին, եւ բերում է նրանց խօսքը:

“Quia si Nestorius iuste damnatus est, damnentur et ista, dicebant, cum suis auctoribus,. Այս կոչումը նայում է ex libellis porrectis հատուածի հետեւեալ տողերին:

“Et sicut domino placuit condemnari manifeste et nominatim in Epheso ab universali Synodo sacrilegium Nestorium, si per vos etiam antea condemnatum sine nomine, sacrilegiorem in varia impietate Theodorum nominatim condemnari et eos qui secundum impiissimam eius expositionem hactenus in Syria et Cilicia sapiant et docent,,.

Վիրերատը, կրկնում ենք, ի նկատի ունի այս տողերը: Ստորագծած բառերը, որ մի պարզ ակնարկ է Պրոկլի հայոց գրած դաւանաբանական թղթին, որ հերքում է թէոդորեան տեսութիւնները առանց անունը տալու, ինքն ըստ ինքեան բաւական են հաստատելու որ յիշեալ թուղթը ծագում է երկրորդ գեսպանութիւնից: Կիւրեղ - թէոդորեան վէճերը վերջացնելուց յետոյ հայերը լայն քարոզչութիւն են սկսում Եփեսոսեան դաւանանքի օգտին. եւ Վիրերատը չեշափազանցնում, երբ ասում է, որ հայ վարդապետները աղմկում են ամբողջ արեւելքը: ‘Նախ քան Պոլիս գնալը հայերը դիմել էին անձամբ

թէ գրով Աղեքսանդրիոյ Կիւրեղ եպիսկոպոսին,  
ինչպէս վկայում են իրենք:

“Sicut in nostris contra Theodorum et  
scripta eius libellis ad Alexandrinam epis-  
copum Cyrillum diximus et in his quae ad  
vestram dicimus beatitudinem.”

Հայերը ինչպէս եւ միւս կողմնակիցները  
Եփեսոսի ժողովի իրենց հակաթէոդորեան քա-  
րոզով այնքան հեռու էին գնացել, որ նոյն իսկ  
նրան պարագլուխը, Կիւրեղ եպիսկոպոսը ստի-  
պուած եղաւ սաստել նրանց եւ ծայրայեղու-  
ղութեան առաջն առնել: Անտիոքի Յովհաննէս  
պատրիարքին ուղղած նամակում բացարձակ ընդ-  
դիմանում է, որ Թէոդորը եւ կամ որեւէ ու-  
րիշը, որ մեռած է անէծքի եւ կամ բանադրանքի  
առարկայ դառնայ. (“neque autem de Theodo-  
doro, neque de alio quoquam qui iam de-  
functi sunt, scripsi tibi aut ut anathemati-  
zetur aut ut abdicetur.. P. G. 65, col. 879.)

Յետ-Եփեսոսեան իրադարձումներին հայ-  
երի այնքան սերտ գործակցութիւնն ապացուցա-  
նում է, որ իրենց հայրենի շրջանում ինդիրը  
անցել է կուսակցական պայքարի բովից: Պէտք է  
կարծել, որ ընդդիմադիր ոյժերն աննշան չեն  
եղել եւ յաղթանակ դիւրութեամբ չեն տուած:  
Այլապէս դժուար թէ կարիք զգացուէր դիմել  
օտար եկեղեցիներին եւ միահամառ գործու-  
նէութեամբ տապալել ընդմիշտ ուժին եւ ամ-  
բապնդել յաղթանակը:

Լիբերատի ցուցումը, որ քարոզիչ վարդա-

պետները “երկու թէ երեք”, այս ու տր հոգի  
էին՝ թելադրում է մի միտք. արդեօք եւ այս  
անգամ դեսպանութիւնը բաղկացած չէր նոյն  
“երկու թէ երեք” անձերից, որի մասին խօսում  
է Կորիւնը: Տեսանք Պոլիս ուղարկուեցան զեւոնդ  
եւ ինքը Կորիւնը եւ սրանց այնտեղ յարեց նաեւ  
Եղիկը, որ Եղեսիայից մեկնել էր Կ. Պոլիս  
Յովսէփի ընկերակցութեամբ: Աւշագրաւ է, որ  
զեւոնդն ու Կորիւնը “մատուցեալ յարէին յԵղ-  
նիկն”, պատմիչը չէ յիշում այստեղ Յովսէփին:

Թուում է, որ երկու սը պատուեր ունեին  
գործել Եղնիկի հետ: Չի կարելի շհամեմատել  
այս երկու երեք հոգուն Լիրերատի 2 կամ 3  
անձերի հետ, որ այնքան ճշտօրէն է որոշում  
դեսպանութեան կազմը:

Եփեսոսեան անցուդարձի վերայ կանգ ա-  
ռանք ոչ միայն այն պատճառով, որ մի նոր եւ  
թանկագին էջ է բացւում հայ եկեղեցու պատ-  
մութեան մէջ նրա գաւանաբանական աւանդի  
ծագման տեսակէտից, այլ եւ որ այդ անցու-  
դարձը նոր լոյս են ցողում Մաշթոցի եւ նրա  
կեանքի վերայ: 420—435 թուերին Մաշթոցի  
այցը Ամիդ, Եղեսիա, Սամսուատ եւ Մելիտինէ  
որեւէ աղերս չունեին եւ չեն կարող ունենալ  
գրերի գիւտի հետ: Մանկութիւնից հելէն  
գպրութեան վարժ, նա պէտք չուներ նաեւ  
կրթութեան: Եւ ոչ թարգմանչական գործը  
կոնէ նրա համար առանձին ճանապարհորդու-  
թեան շարժառիթ կարող է նկատուել: Եթէ  
գրերի առթիւնա այցելել է յիշեալ քաղաքները

Եւ մանաւանդ Եղեսիան, ժամանակակից լուսաւորութեան կենդրոնը, յայտնի իր աստուածաբանական բարձր դպրոցով։ յամենայն դեպս այցը եղել է 420 թուականից շատ առաջ։ 406 գրեթը արդէն պատրաստ էին եւ նրանց հոգով վերջացած։ Հաւանական է, որ դրի որոնումների ըրջանին նա ծանօթացել է ոչ միայն Ռաբուլի, այլ եւ աւելի հոչակաւոր Թէոդոր Մամուեստացու հետ։ Անձնական ծանօթութեան հետեւանքով է գրուած եւ Թէոդորի մեզ հետաքրքրող գործը, Մասշունչուսի հասցէին։ Գրութիւնը տեղի ունեցած պիտի լինի մինչեւ 406 թիւը, հաւանօրէն։ Թէոդորի քահանայութեան ատենով, ինչպէս յիշեցինք։

Հաւանական է, որ Մաշթոցի այցը ասորի եպիսկոպոսներին, որի մասին պատմում է Կորիւն, կապ ունի հաւատոյ ինդրի հետ եւ մօտ է 430 թուականներին։ Աչքի է ընկնում մի հանգամանք։ Եղեսիայից Մաշթոց իշխում է Սամսուատ, և յորում մեծապատիւ լսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցւոյն մեծարեալ լինէր ։ Զարմանալի է, որ եպիսկոպոսի անունը չի տալիս, մինչդեռ յիշում է Ամոդի, Եղեսիայի եւ Սելիտինի եպիսկոպոսներին յանուանէ։

Սամսատի գրչի անունը, որ է Հռովհանոս, նմանապէս արձանագրել է Կորիւն։ Սամսատի եպիսկոպոսական ախոռի վերայ նստած էր այն ժամանակ Անդրէաս։ Սա իսաոն էր Եփեսոսիան աղմուկներին եւ գտնւում էր Յովհաննէս Անտիոքացու բանակում։ Անշան ոմն չէր նետու-

ըականների. շարքերում։ Համարուում էր թշնամի Ռաբուլին, վերջինիս դասալքումից յետոյ. եւ պատմում են, որ յանդիմանական նամակ է գրել Ռաբուլին նրա՝ Թէոդորիտի, կանոնաւոր Նեստորականի եւ Ահւրեղի քաջանուն ախոյեանի գէմ ելնելուն համար։

Արդեօք դաւանաբանական նկատումները չե՞ն, որ ծածկել են Սամոսատի եպիսկոպոսի անունը։ Ռաբուլ եւ Ակակ Ահւրեղեան հաւատի սիւներ էին, եւ ոքքան ցանկալի է սրանց ծանօթութիւնը, նշյերան խորշելի պիտի համարուէր Անդրէաս Սամսացին, իրը նեստորամիտ հերձուածոզ։ Հնարիաւոր է, ուրեմն, որ Անդրէասի անունը կամաւ է թողած։

Կորիւնը գրել է Մաշթոցի վարքը Նրա մահից յետոյ որ գիպաւ Յազկերտի ըստ Պազար Փարպեցու՝ ելուլուրդ տարին, մեծեկի 13, որ է 439 Մարտի 17 կամ 440 Մարտի 18։ Գրել է Յովսէփի պատուէրով որ նահատակուեց նոյն Յազկերտի 16 տարին, հըստից 25, այն է 454, Յուլիս 25։ Եւ որովհետեւ Կորիւնը չի յիշւում է. դարի շարժումներին, հաւանական է, որ մեռած է մինչեւ Արտաշատի ժողովը, Յազկերտի երկոտասաներորդ տարին. 439—440։ Սորանից հիմնում է, որ Մաշթոցի կեանքը գրած պիտի լինի 440—450 տասնամեակի ընթացքում։

Սակայն չի կարելի անուշադիր թողնել, որ Կորիւն Սիւնեաց Վասակ իշխանին գովելով, մեծարում է նրան այնպիսի մակդիրով, որ կասկածանքի դռն է բաց անում։ Սիսական վա-

սակը ոչ միայն “խորհրդական եւ հանձարեղ” այլ եւ “յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ” : Արգեօք ակնարկ չէ՞ հետագայ եղելութիւնների եւ Վասակի վարմունքի վրայ: Պէտք չէ՞ ենթադրել, որ Կորիւն համախոհ է եղել վատարախտ մարդպանին եւ նրա կուսակցութեան եւ ուստի անհաղորդ է մացել շարժման: Վասակին յառաջիմացութեան շնորհ վերագրելով հասկացնել է տալիս, որ ապստամբութեան ծանր հետեւանքները հեռատեսօրէն կշռելով, հակառակ է հանգիսացել շարժման: Այս դէպքում՝ Կորիւնի նկատողութիւնը կը հնչի իրր խուլ զօղանջ արդարութեան ձայնի, այն ձայնին, որ այնպէս խեղգել են Մամիկոնեան պատմիչները, Եղիշէ եւ Ղաղար:

Կորիւնը գիտէ Վահան Ամատանուն հազարապետի պաշտօնում, գիտէ եւ նրա մահը՝ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր” : Եղիշէն պատմում է, ի թիւս այն անցքերի, որ տեղի ունեցան Յազկերտի ժք. տարին նաեւ հազարապետի պաշտօնանկ լինելը. “Հանեալ ի գործ ցյն փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն” : Եթէ խօսքը նոյն Վահանի մասին է, նշանակում է, նրա մահը պատահել է 439—440 թ. յետոյ: Հետոյ: Հետեւաբար եւ Կորիւնի գործը ընկնում է նոյն թուից յետոյ: Այլեւ Կորիւնը յիշում է հայրապետական աթոռի տեղապահներ, Սահակի եւ Մաշտոցի վախճանից յետոյ, Յովսէփին եւ “եւ այլ աշակերտ Յովհանն անուն, այր իսկ սուրբ վարդապետասէր եւ ճշմարտապատում” : Աս-

շատ շարչարանքների է ենթարկում՝ Տիզբոն  
քաղաքում հաւատի համար եւ արժանանում է  
խոստովանող կոչման. եւ յետոյ ՚ի նոյն վերա-  
կացութիւն դառնայր յերկիրն Հայոց.:

Ով է այս Յովհաննը, որ անծանօթ է Եղի-  
շեին եւ Պաղարին: Յայտնի է Արրահամ խոս-  
տովանողը, որ տասներկու տարւոյ գերու-  
թիւնից յետոյ, աղատ արձակուեցաւ աքսորից:  
Չենք ուզում թէական մէկնութիւնների մէջ  
մտնել<sup>1</sup>: Ով որ էլ լինի անծանօթ Յովհաննը,  
Նրա դարձը չի կարելի յառաջ դնել քան  
Արրահամի եւ նախարարների արձակումը Պե-  
րողի հինգերորդ տարին այսինքն 462 թ. կան  
նշաններ, ուրսմն, որ Կորիւնը թեւակոխել է  
եւ դարի երկրորդ կէսը:

Ուաբուլի մահից յետոյ Եղեսիայում զօ-  
րանում է նեստորականների ազգեցութիւնը:  
Նրա յաջորդ Իբասի օրով: Սորա մահը 457 ին  
յառաջ է բերում զօրեղը դութիւնութիւն եւ բո-  
լոր նեստորական վարդապետները հալածում են  
Եղեսիայից Պարսից հողը: Վերջնական հա-  
րուածը դրում է նրանց Եղեսիայի հոշակաւոր,  
պարսկական կոչուած դպրոցի, նեստորականու-  
թեան այդ դղեակի փակմամբ 489/ն: Արքան  
թուլանում են յունական հողերում Կեստորի

<sup>1</sup> Այս հարցի քննութեան համար յիշելու է, որ Կես-  
տորութիւն ներբռղենի խաչին՝ անվաւեր դրութեան հա-  
մաձայն, Վարդանայ պատերազմից յետոյ հայրապետու-  
թիւնը բաժանում է երկուսի. «Բոհան Մանդակունի ի պար-  
ուից կողման կաթողիկոս եւ Գիւտ ի կողմանս յունաց»:

կողմակիցները, այնքան զօրանում են նրանք պարսից իշխանութեան տակ, վայելելով մանաւանդ գերող թագաւորի հովանաւորութիւնը (457—484):

Եռանգուն բարձուման կարողանում է ներշնչել գերողին այն միտքը, որ քրիստոնեանները երբեք սրտով չեն կպչի պարսից իշխանութեան եւ աշք չեն գարձնի կայսերներից, մինչեւ որ դաւանանքի խրամատը չանջրպետէ նրանց: Պէտք է, ուրեմն յառաջ տանել, խրախուսել նեստորականութիւնը այլագաւան քրիստոնեաններին բռնի ոյժով պարտաւորել յարել նեստորական, իբր պետական եկեղեցու:

Պերողի յաջորդը Վաղարշ 484—488, ինչպէս կաւատ, սկզբներում (488—496). բարեկամ՝ լինելով կայսերներին դադարեցրին հալածանքը ոչ նեստորական քրիստոնեանների: Արանց համար նպաստաւոր պայմաններ ստեղծուեցան մանաւանդ Զենոն եւ Անաստաս հակաքաղկեդոնական կայսերի օրով:

Դժբախտաբար, Ե. Դարի երկրորդ կէսի գաւանաբանական ելեւէջների համապատասխան արձագանգն հայ եկեղեցական կեանքում թուռում է թէ անհետ կորած է: Պետական իշխանութեան ճնշման տակ թերեւս նեստորականութիւնն եւս աջող օրեր ունեցած լինի: Բարգէն կաթուղիկոսին ապաւինող ասորի եկեղեցականները հաւատացնում էին, որ նեստորականները լուրեր են տարածում, թէ հայերը նրանց հաւատակից են. “եւ այդպէս ասեն, թէ հոսոմք,

եւ հայք եւ վիրք եւ աղուանք զնոյն կանոն եւ  
եւ զհաւատ ունին զոր մեքս ունիմք, (Գիրք  
թղթոց, էջ 46):

Այս խօսքերին, որ քարոզական նպատա-  
կով չափազանցրած են, հարկաւ հաւատ չի կա-  
րելի ընծայել: Բայց եւ չի կարելի ժխտել, որ  
Ճշմարտութեան նշոյլ կայ այն մտքով, որ մաս-  
նակի կղզիներ են եղել: Յիրաւի, ոչ միայն 424  
թուի, այլ եւ 486 թուի նեստորական ժողով-  
ներին ներկայ եկեղեցականների թւում՝ պատա-  
հում են ներկայացուցիչներ եւ Հայաստանից.  
առաջնում՝ ոմն Արտաշահը եպիսկոպոս, երկրոր-  
դու մ՝ Մովսէս եպիսկոպոս (Synodicon orientale):  
Նեստորականների ներկայութիւնը, քարոզը,  
միցումն ու նուաճումներն առաւել եւս պիտի  
լաւէին տեղական բյժերը նոցա ընդդիմութեանը  
եւ ամրակոէին այն տրամադրութիւնը, որ անցել  
էր Եփեսոսեան մաքառումների հնոցով:

Կորիւնը հաւատարիմ է այդ տրամադրու-  
թեան. Նրա գործը հակասորական կնիք, նես-  
տորական խորշանք ունի: Ասորական նպաստը  
գրերի գիւտում դիտմամբ սրօղուած է նրա գրչի  
տակ: Սուրբ գրքի թարգմանութիւնը համարում  
է յունական բնագրից թէ նախնականը եւ թէ  
սրբագրածը Եղնիկի բերած յոյն վաւեր օրինակի  
վերայ:

Ինչպէս եւ մեկնելու լինենք Կորիւնի դիրքը  
եւ յարակից խնդիրները, մի բան է հաստատուն,  
ու հայ եկեղեցու դաւանաբանութեան կիւրե-  
ղեան խարիսխը աւանդ է Եփեսոսի ժողովից:

Մաշթոց եւ նրա աշակերտները զեւոնդ եւ  
թէաբար կորիւն երեւան գալով ընդհանուր ե-  
կեղեցական ասպարիզում անմիջական մասնակ-  
ցութիւն են ունեցել ճշմարտութեան որոնումնե-  
րին եւ հիմնարկել են հայ դաւանաբանական  
շէնքը։ Սերունդների միշտ արթուն զգացումը,  
միանդամ ստացած ժառանգութիւնը պահելու  
անդրդուելի կորովը բացատրելու է եւ նորանով,  
որ նա սրբագործուած է եղել հայ լուսաւորու-  
թեան ամոլների սրբազն աջով։

---







